Azg Ազգ

2 ՓԵՏՐՈՒԱՐ 2007 ՈՒՐԲԱԹ 19 (3671)

2006 թվականն ամենավտանգավորն էր լրագրողների համար

«Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպությունը երեկ հրապարակել է աշխարհում մամուլի ազատության իր տարեկան զեկույցը: Զեկույցում նշվում է, որ 2006 թվականը վերջին 10 տարիներին «ամենամահացու» էր աշխարհի լրագրողների համար: 2006 թ. մասնագիտական պարտքը կատարելիս մահացել է 81 լրատվական աշխատող, որից 69 Իրաքում: Ինչպես տեղեկացնում է «Ազատություն» ռադիոկայանը, զեկույցի համաձայն, անցյալ տարի անազատության մեջ է անցկացրել 871 լրագրող: Զեկույցում առանձին անդրադարձ չկա Հայաստանին, սակայն կազմակերպության նախկին խորհրդային մասով պատասխանատու էլզա Վիդալը նշել է, որ Հայաստանում մեծ գրաքննություն, ձերբակալություններ կան եւ հավանաբար մյուս տարի Հայաստանն ընդգրկվի զեկույցում: Այս տարի Կովկասից զեկույցում ընդգրկվել է Ադրբեջանը, ինչի որ բռնությունները շատ են եղել լրագրողների հանդեմ:

«Կոնվերս բանկը» գնեց Էդուարդո Էռնեֆյանը

Հայաստանի բանկային համակարգում ավելանում է օտարերկրյա կապիտալը

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Կոնվերս բանկ» ՓԲԸ տնօրենությունից ստացված հաղորդագրությունից տեղեկացանք, որ բանկի նոր սեփականատեր է դարձել արգենտինահայ հայտնի գործարար Էդուարդո Էռնեֆյանը: Նա Հայաստանի հանրությանը նախեւառաջ հայտնի է որպես «Զվարթնոց» օդանավակայանի կոնցեսիոներ, ապա գյուղատնտեսության բնագավառում իր կատարած ներդրումներով, որոնց նպատակը էկոլոգիապես մաքուր կամ այսպես կոչված օրգանիկ գյուղմթերքների արտադրության ու արտահանման իրականացումն է:



«Կոնվերս բանկի» ձեռքբերումը Էդուարդո Էռնեֆյանի փաստորեն երրորդ խոշոր գործարքն էր Հայաստանում: Որեւէ այլ մանրամասն գործարքի վերաբերյալ «Կոնվերս բանկից» չհայտնեցին, ասելով միայն, որ մանրամասների մասին կտեղեկացվի առաջիկա օրերին նախատեսվող մամուլի ասուլիսի ժամանակ: Սակայն հայտնի է, որ բանկագությունները բանկի ձեռքբերման վերաբերյալ բավականաչափ երկար տեւեցին:

Բանկի արդեն նախկին բաժնետեր Սմբատ Նասիբյանի կողմից «Կոնվերս բանկը» վաճառելու ցանկության մասին լուրը սկսեց շրջանառվել Հայաստանի բանկերում կորպորատիվ կառավարման հայեցակարգի ներդրումից հետո: Մինչ այդ բանկի վարչության նախագահի եւ գլխավոր տնօրենի պաշտոնը զբաղեցնող Սմբատ Նասիբյանը բազմիցս էր իր անհամաձայնությունը հայտնել ներկա փուլում կորպորատիվ կառավարման հայեցակարգը ներդնելու առնչությամբ, իսկ ներդնելուց հետո երկար ժամանակ դժվարանում էր ընտրություն կատարել բանկի կամ բաժնետերերի խորհրդում կամ տնօրեն մնալու միջեւ: Թերեւ հենց այս հանգամանքն էլ ստիպեց նրան բանկը վաճառելու որոշում ընդունել:

Տես էջ 2

ՄՈՍԿՎԱ

Պուտինը ցանկանում է, որ հայերը կամ ադրբեջանցիները վերականգնեն Աղդամը

ՌԴ-ում խենթոֆոբիան անհրաժեշտ է արմատախիլ անել համատեղ ջանքերով

Հայաստանի հետ Ռուսաստանն ունի լավ հարաբերություններ ինչպես քաղաքականության մեջ, այնպես էլ տնտեսական ոլորտում: Երեկ ասուլիսում հայտարարել է Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը: Նա նաեւ նշել է, որ Հայաստանի հետ Ռուսաստանը փոխգործակցում է տնտեսական բազմաթիվ նախագծերում: ՌԴ նախագահը հույս է հայտնել, որ այդ համագործակցությունը ժամանակի հետ միայն կամրապնդվի:

Ընդգծելով, որ Հայաստանի հետ հարաբերությունները ռազմավարական են, Վլադիմիր Պուտինը հայտարարել է, թե Ռուսաստանը բոլորի հետ է կառուցում գործընկերության հարաբերություններ, եւ որոշ երկրների հետ դրանք ավելի սերտ են: Մասնավորապես խոսքն ԱՊՀ երկրների մասին է, որոնցից, սակայն, Վրաստանի հետ, Պուտինի խոսքերով, Ռուսաստանը ոչ մի կերպ վերջին շրջանում չի կարողանում կարգավորել հարաբերությունները:

Վրացական խնդրի գագաթնակետի առնչությամբ Պուտինը շեշտել է Հայաստանի օրինակը, որի պարագայում եւս կիրառվել են շուկայական գներ, սակայն դա խնդիրներ չի առաջացրել ռազմավարական գործընկերների միջեւ:

Ադրբեջանցի լրագրողի՝ Հայաստանի եւ Ադրբեջանի հակասությունների լուծմանը Ռուսաստանի հնարավոր աջակցության, նաեւ Հայաստանի տարածքում ռուսական ռազմաբազաների առկայության մասին հարցին Վլադիմիր Պուտինը պատասխանել է, որ Հայաստանում ռազմաբազաները մնացել են դեռեւս խորհրդային Միության ժամանակներից, եւ դրանք կան ոչ միայն Հայաստանում, այլեւ Տաջիկստանում, ընդ որում՝ այդ բազաների ռազմական ներուժն ուղղված չէ այդ տարածաշրջանի երկրների դեմ:

«Ինչ վերաբերում է Հայաստանի եւ Ադրբեջանի հակասություններին, պատ Ռուսաստանը փորձում է այդ երկրներին օգնել՝ գտնելու օպտիմալ որոշում, բայց այդ որոշումը պետք է ընդունեն դրա ինքներդ... Նաեւ, թեմայից շեղվելով, կուզենայի կամ հայերին, կամ ադրբեջանցիներին ցանկանալ վերականգնել Աղդամը: Այդտեղի պորտվեյնը միշտ մեծ ճանաչում ուներ նախկին ԽՍՀՄ-ում», պատասխանն այսպես եզրափակել է Վլադիմիր Պուտինը: Աղդամի պատկանելության առումով Պուտինի «անփույթ» մոտեցումն ադրբեջանական լրատվամիջոցներին ստիպել է հիստերիկությամբ հերքական անգամ խոսել սեփական քաղաքության դիրքերից:

Ի թիվս բազմաթիվ այլ հարցերի, ժամեր տեւած ասուլիսի ընթացքում Վլադիմիր Պուտինը պատասխանել է նաեւ Ռուսաստանում ազգայնամոլության, ֆաշիզմի ու այլասյացության դրսեւորումների մասին հարցերին: Պուտինը մասնավորապես նշել է, որ այդ խնդիրը մտահոգում է բոլորին, սակայն իշխանական համապատասխան մարմինները ոչ միշտ են համարժեք արձագանքում այդ դրսեւորումներին:

Այս երեւույթի պատճառները շատ են, եւ, ըստ Պուտինի, դրանց թվում են խորհրդային Միության փլուզումից հետո որոշ սոցիալական խմբերի մեջ ձեւավորված վիրավորվածության զգացումը, գաղափարախոսական վակուումը, չկարգավորվածությունը: Ըստ Վլադիմիր Պուտինի, ամեն դեպքում այդ երեւույթներն անհրաժեշտ է արմատախիլ անել իշխանության եւ հանրության համատեղ ջանքերով:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Թուրքիան սպառնում է դադարեցնել համագործակցությունն ԱՄՆ-ի հետ

Փետրվարի 4-9 Թուրքիայի արտգործնախարար Աբդուլլահ Գյուլը պաշտոնական այցով կլինի Միացյալ Նահանգներում, կունենա բարձրաստիճան հանդիպումներ: «Ազերի.որես» գործակալության ներկայացմամբ, քննարկումների հիմնական թեմաները կլինեն Հայոց ցեղասպանության ճանաչման օրինագիծը եւ քրդական խնդիրը: Մինչ այցելությունը Գյուլը հայտարարել է, որ պաշտոնական Վաշինգտոնի կողմից հայերի ցեղասպանության ճանաչման դեպքում ռազմական համագործակցությունը երկու երկրների միջեւ կդադարեցվի:

Ըստ լրատվամիջոցի հաղորդման, որոշ տեղեկություններով, Բուշի վարչակազմը Կոնգրեսում հիշատակված բանաձեւը չընդունելու համար Թուրքիայից կպահանջի բացել Հայաստանի հետ սահմանը:

ՆԱՏՕ-ին Հայաստանի անդամակցության խնդիր դեռ դրված չէ

Լրատվամիջոցներում Ջ. Մարշալի անվամբ անվտանգության հետազոտությունների եվրոպական կենտրոնի անունից հրապարակվել էր հաղորդագրություն, թե փետրվարի 5-7-ը Երեւանում կայանալիք սեմինարում քննարկելու են ՆԱՏՕ-ին Հայաստանի անդամակցության հարցերի մանրամասներ: ՀՀ ՊՆ տարածած հաղորդագրության համաձայն, այդ տեղեկությունը չի համապատասխանում իրականությանը: «Պաշտոնական Երեւանը բազմիցս հայտարարել է եւ կրկնում է, որ Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգում ՆԱՏՕ-ին անդամակցելու խնդիր դրված չէ»:

Մնաց նշանակեն նախագահ

Փետրվարի 1-ին Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանը հրամանագրով Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախկին նախագահ Ալեքսան Հարությունյանին նշանակել է այդ խորհրդի անդամ 6 տարի ժամկետով:

Լեւոն Չախմախչյանը ձերբակալված է

Մոսկվայի հիվանդանոցներից մեկում ձերբակալվել է ՌԴ խորհրդի նախկին անդամ Լեւոն Չախմախչյանը: Ինչպես ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ին տեղեկացրել է Չախմախչյանի պաշտպանը, նրան տեղափոխել են գլխավոր դատախազություն, որից հետո դատարան՝ կալանքի թույլտվություն ստանալու: Փաստաբանը եւս մեկ անգամ հիշեցրել է, որ Չախմախչյանը զրկված չէ պատգամավորական անձեռնմխելիությունից:

Ռուսաստանում քրեական հաշվեհարդա՞ր վրացիների ու հայերի միջեւ

Ինչպես տեղեկացրել էր **«Ազգը»**, վերջին օրերին Մոսկվայում տեղի ունեցավ երկու միջադեպ, մասնավորապես ինքնաձիգի կրակոցներով սպանվել է հայ Արմեն Մանուկյանը, իսկ մեկ օր անց մահափորձ էր կատարվել վրացի Արաբուլի Ռոբինզոնի դեմ, տուժել էր նաեւ նրա վարորդ Էմիլ Կարապետյանը:

Ռուսական «Կոմերսանտը» գրում է, թե հիշատակված երկու անձինք՝ Արաբուլի Ռոբինզոնը եւ Արմեն Մանուկյանն օրենքով գողեր են, եւ Մանուկյանի սպանությունը կապված է Ռոբինզոնի դեմ մահափորձի հետ: Ենթադրվում է, որ Մանուկյանին սպանել են վրացի գողերի հետ վիճելուց հետո, որին ի պատասխան «Սեւա» մականունով Արմեն Մանուկյանի ընկերները որոշել են հաշվեհարդար տեսնել վրացիների հետ:

Եվրոխորհրդարանը հարգում է Հրանտ Դինքի հիշատակը

Եվրոխորհրդարանի նախագահ Հանս Գերդ Պոտտերինգը, անդրադառնալով հունվարի 31-ի նիստում մեր հայրենակից Հրանտ Դինքի սպանությանը, հույս է հայտնել, որ այս ողբերգությունը կխթանի երկրում քրեական օրենքները բարեփոխելու թուրքական կառավարության վճռականությունը:

Ինչպես նշում է CNN-turk-ը, Եվրոխորհրդարանի նիստին նախագահող Պոտտերինգը նախ շնորհակալություն է հայտնել Դինքի սպանությունը բացահայտելու հարցում Էրդողանի կառավարության ցուցաբերած բծախնդրության համար, ապա՝ քրեական օրենքներին առնչվող բարեփոխումներն առաջացնելու կոչ է արել նրանց: Այնուհետեւ Եվրոխորհրդարանի նախագահի առաջարկով խորհրդարանականները մեկ րոպե լռությամբ հարգել են թուրքահայ ականավոր լրագրողի հիշատակը:

Հ. Ղ.

Սովյալ կամ տխուր լինելու համար չեն վիրավորում...

Հանրահայտ Նայջել Չարնոքը Հայաստանում ներողություն խնդրեց

ՄԵԼՈՆՅԱ ԲԱՂԱՅԵՆ

Սանինսլավսկու անվան ռուսական պետական թատրոնի բեմում, երբ անգլիացի արտիստ Նայջել Չարնոքն սկսեց իր ներկայացումը եւ հիշ անց բեմում եւ դահլիճում զգեստափոխվելով մերկացավ գրեթե, երբ ձերմակ գուլպաները հերթով թռան հանդիսատեսի վրայով, թվաց, թե դրանց պիտի հաջորդեն ձեռին բռնած մնացած առարկաները՝ կոշիկները, գոտին, ջրի շիշը եւ այլն: Անակնկալի եկած դահլիճն սկսեց զգուշանալ... իրերի շրջանի ճամփորդությունները լավ բան չէին խոստանում: Չարնոքի մենախոսությունների անպարկեշտ արտահայտությունները, շարժումների անպատկառությունը հանդիսատեսի մի մասին ստիպեցին լքել դահլիճը: Իմպրովիզացիոն այս ներկայացման ամենավիրավորական համարը, սակայն, Հայաստանի Հանրապետության գեղնատարած դրոշի վրա նրա ոտքերով դրոշելն ու ցատկոտելն էր: Իհարկե, Բրիտանիայինը եւս կողին էր, բայց դրանից մեր ազգային արժանապատվության զգացումների անարգանքը մեղմանո՞ւմ է:

Իհարկե, պետական երկու խորհրդանիշները շարունակեցին հայտնվել ու պտտվել ամենատարբեր իրավիճակներում, որին հաջորդող մնացած հատվածների մարմնային շարժումների սանձարձակությունը եւ անպատասխանատու խոսքերը գնալով սաստկացան: Դահլիճը բարեկրթության սահմաններում մնաց եւ ծափահարություններն ուղղվեցին զուտ արտիստական կատարմանը: «Սա Հայաստանի համար չէր» կամ «Այստեղ ոչինչ ինձ չզարմացրեց»՝ տարակուսած մի քանի երիտասարդներ այսպես արտահայտվեցին:

Զարմանալի է ու անհասկանալի, թե հիրավի արտիստական փայլուն կատարմամբ ու անուրանալի ձիրքով օժտված, տաղանդավոր այս արվեստագետը՝ կատարելապես մարմնի պլաստիկային տիրապետող, պարային արվեստի այս յուրատեսակ ֆորմը, Մեծ Բրիտանիայի ազգային գանձ համարվողը, ինչ կարիք ունի արժեզրկելու իրեն եւ իր բեմարվեստը նման խեղկատակային շարժումներով եւ անբարո շարժուձեւերով:

Տես էջ 2

ԱԶԳ

Ընթացիկ

Ծաղկաձորը հայտարարվել է զբոսաշրջային կենտրոն

Այս տարի Հայաստան ժամանող զբոսաշրջիկների թիվը ակնկալվում է հասցնել 450 հազարի

Ծաղկաձոր քաղաքը զբոսաշրջային կենտրոն ճանաչելու մասին երեկ համապատասխան որոշում է ընդունել Հայաստանի կառավարությունը: Ներկայացնելով այն լրագրողներին, առեւտրի եւ տնտեսական զարգացման փոխնախարար Արա Պետրոսյանը նշեց, որ նման լիազորություն Հայաստանի կառավարությանը տրված է «Զբոսաշրջային գործունեության մասին» օրենքով, եթե որեւէ բնակավայրում առկա են պատմաճարտարապետական հուշարձանների կենտրոնացվածություն, համապատասխան կլիմայական պայմաններ, ենթակառուցվածքներ: Նման կենտրոն ճանաչելու առավելությունն այն է, որ քաղաքի զարգացման ծրագրերը մշակելիս պետք է հաշվի առնվի այդ հանգամանքը, եւ եթե կան այլ ծրագրեր, որոնք կարող են խաթարել զբոսաշրջության զարգացմանը, ապա դրանք չեն կարող իրականացվել:

Կառավարությունում երեկ հաստատվել է զբոսաշրջության ոլորտի մեկ այլ փաստաթուղթ՝ 2007 թ.-ին զբոսաշրջության զարգացման ծրագիրը եւ հիմնական ուղղությունները: Մինչ այդ փաստաթղթի մասին մանրամասներ հաղորդելը, Արա Պետրոսյանը տեղեկացրեց, որ արդեն ամփոփված տվյալներով 2006 թ.-ին Հայաստան այցելած զբոսաշրջիկների թիվը կազմել է 381 հազար մարդ: Դա 19 տոկոսով ավելի է նախորդ տարվա ցուցանիշից, որն էր 318 հազար մարդ: Ինչ վերաբերում է այս տարվան, ապա ծրագրվում է աճահոլել 20 տոկոսաձ, տարեկան ցուցանիշը հասցնելով շուրջ 450 հազարի: Այդ նպատակով նախատեսվում է պետական բյուջեից հատկացնել 70 մլն դրամ:

ՀՍՏԼՈՒԲ

Վերոնշյալ գումարը հատկացվելու է գովազդային նյութերի տպագրության ու տարածման, այլ երկրների տուրոպերատորների եւ լրագրողների դեպի Հայաստան ճանապարհորդական այցեր կազմակերպելու, միջազգային ցուցահանդես-տոնավաճառների մասնակցելու համար: Փոխնախարարը հայտնեց, որ բացի յուրաքանչյուր տարի Բեռլինի եւ Լոնդոնի միջազգային ցուցահանդեսներին մասնակցելուց, Հայաստանն այս տարի ներկայացված կլինի նաեւ Չինաստանում անցկացվելիք ցուցահանդեսին: Ներկա պահին Հայաստանի զբոսաշրջային կազմակերպությունները մասնակցում են Իսպանիայում բացված ցուցահանդեսին: Նախատեսվում է նաեւ շարունակել Հայաստանի մասին գովազդային տեսահոլովակների ցուցադրումը Սի էն էն-ով, այս տարի նաեւ «Եվրոնյուսով»:

Միայն Ծաղկաձորի մասին գովազդային տեսահոլովակի համար, որը դարձյալ պետք է ցուցադրվի Սի-էն-էն-ով, պետական բյուջեից կհատկացվի 180 մլն դրամ: Շարունակելով Ծաղկաձորի թեման, Արա Պետրոսյանն այն հանգամանքը հայտնեց, որ այդտեղ գտնվող հյուրանոցների գները որոշվում են շուկայում եւ բացառեց հակամրցակցային համաձայնությունների հնարավորությունը: Միաժամանակ, խոսելով այս տարվա ընթացքում կառավարության ձեռնարկելիք քայլերի մասին, փոխնախարարը հիշատակեց նաեւ մեր հյուրանոցների գներն ավելի մրցունակ դարձնելուն ուղղված քայլերը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Կոնվերս բանկը» գնեց Էդուարդո Էռնեֆյանը

1-ին էջից

«Կոնվերս բանկի» վաճառքը եւ օտարերկրյա կապիտալի նոր հոսքը դեպի Հայաստան հաջորդեցին վերջին տարիներին արձանագրված մի քանի նմանատիպ գործարքներին, որոնց արդյունքում Հայաստանի բանկային համակարգ մուտք գործեցին օտարերկրյա (այդ թվում միջազգային) կազմակերպություններ եւ ֆինանսաբանկային խմբեր:

Առաջինն «Արդշինբանկի» ձեռքբերումն էր «Միջազգային բիզնես կենտրոն» ընկերության կողմից, որի սեփականատերերը Ռուսաստանի մեր հայրենակիցներն են: Բանկը վերանվանվեց «Արդշինինվեստբանկ»:

Հաջորդը «Հայէկոնոմբանկն» էր, որի բաժնետոմսերի 25 տոկոսի սեփականատերը մեկուկես տարի առաջ դարձավ Վերականգնման եւ զարգացման եվրոպական բանկը՝ Եվրոբանկը:

«Էմորիկի» բանկը ձեռք բերեց ամերիկահայ հայտնի գործարար Ջերարդ Գաֆեսճյանը, որից հետո ստեղծվեց նոր ֆինանսաբանկային խումբ, որի մեջ բացի վերանվանված «Կասկադ» բանկից, ընդգրկվեցին նաեւ ապահովագրական, ներդրումային եւ խորհրդատվական ընկերությունները:

Եվ վերջապես, անցյալ տարի նախ ղազախական խոշոր «Թուրան-Ալեմ» բանկը ձեռք բերեց հայկական «Միջինվեստբանկը», որը վերանվանվեց «ԲՏԱ ինվեստբանկ»: Այնուհետեւ ԱՔԲԱ բանկի բաժնետոմսերը ձեռք բերեց ֆրանսիական «Կրեդիտ ագրիկոլ» հանրահայտ բանկը, որը համարվում է Եվրոպայի լավագույն բանկը, ստեղծելով «ԱՔԲԱ կրեդիտ ագրիկոլ» բանկը:

«Ինչպե՞ս կբնութագրեիք Հայաստանի բանկային համակարգում օտարերկրյա կապիտալի մասնակցության ավելացումը» հարցն ուղղեցինք Հայաստանի բանկային համակարգի ամենահայտնի փորձագետներից մեկին՝ Կենտրոնական բանկի նախկին նախագահ Բագրատ Ասատրյանին: «Միանշանակ դրական եմ գնահատում օտարերկրյա կապիտալի մասնաբաժնի ավելացումը մեր բանկային համակարգում: Հայաստան է մտնում մաքուր փող, ինչը ողջունելի է», ընդգծեց Բագրատ Ասատրյանը:

Եթե յուրաքանչյուրն իր գործով զբաղվեր

Փորձաքիվ չեն այն միջոցառումները, որոնց կազմակերպիչներն ու մասնակիցների գերակշիռ մասը իրենց երկրի մտավորական են կոչում՝ չնկատելով իրականությունը: Դրանով էլ չեն սահմանափակվում եւ տրամաբանությունից զուրկ հայտարարություններ են անում: Ապացույցներից մեկը Ճարտարապետների միությունում երեկ կայացած միջոցառումն էր, որի բանախոս Ռաֆայել Համբարձումյանը Հայաստանում գործող հայրենակցական միությունների անունից հայտարարեց, թե նպատակ ունեն մշակելու եւ գիտականորեն ցույց տալու ՀՀ կառավարության անելիքը «Ակոս» պարբերականի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի սպանությունն առավելագույնս ի շահ Հայոց ցեղասպանության ճանաչման օգտագործելու համար:

Այնուհետեւ Հրանտ Դինքը որպես հանուն գաղափարի սպանված՝ նահատակ, ապա հերոս կոչվեց, որի սպանությունը մեր՝ հայության հաղթանակն է, ըստ Ռաֆայել Համբարձումյանի: Նա ամենեւին էլ հետաքրքրված չէր, թե իրոք ողջ հայությունը զոհերի շարք ենթադրող այդ տրամաբանությանը համակարծիք է: Ի դեպ, դահլիճում եղան թե՛ սպանությունը հայության հաղթանակ, թե՛ ՀՀ կառավարությանը սպանությունը օգտագործելու առաջարկների առնչությամբ անհամաձայնություն արտահայտող մարդիկ:

Սակայն Ռաֆայել Համբարձումյանի հաստատակամությունը չկոտրվեց նաեւ ՀՀ ԳԱԱ արեւելագիտության ինստիտուտի տնօրեն Ռուբեն Սաֆրաստյանի ելույթից հետո, որը բավական մանրակրկիտ անդրադարձ էր Թուրքիայի ներքին բազմաբեր զարգացումներին եւ Հրանտ Դինքի սպանության Թուրքիայի ներսում գործող խորքային պետություն կոչվածի կողմից պատվիրված լինելուն: Խորքային պետությունը, որ տարբեր ոլորտներում առանցքային պատասխաններ վարող հարյուր անձանց միություն է, ձգտում է ամենայնս պահպանել Աթաթուրքի ստեղծած պետության սկզբունքները եւ այդ նպատակով էլ փորձում է երկրում գերակա դարձնել ահաբեկչության թքնոլորտը: Ռուբեն Սաֆրաստյանը նաեւ մտավախություն հայտնեց, որ Թուրքիայում բարձրացող ազգայնական ալիքը կարող է լուրջ վտանգ դառնալ պոլսահայության համար, հարկ է նկատի առնել, որ հայկական համայնքը թուրքիայի ամենաանպաշտպան փոքրամասնությունն է:

Ն. Պ.

ԳՈՐԾԻՔ ՏԱՊԱՆԵՊ

Սովյալ կամ տխուր լինելու համար չեն վիրավորում...

1-ին էջից

Ստանիսլավսկու անվան թատրոնի ղեկավարությունն իրավացիորեն, պետական թատրոնի բեմում սեփական երկրի դրոշն անարգող եւ մարմնային ու խոսքային անպարկեշտություններով լի բեմականացումը նկատելով անբարո, Չարնոֆի երկրորդ ներկայացումը կասեցնելու որոշմամբ դիմել է մշակույթի նախարարությանը, ինչին համաձայնել է վերջինս՝ իր հայտարարությամբ: «Անգլիական այս գանձը, որ հակագեղագիտական է, ճաշակի ու չափի բացակայություն, սին ու անարժեք մի արվեստ՝ փաստ է: Սակայն գրաֆնինի դերից խուսափելու համար պարզապես տեղեկացնում ենք, որ մտահոգիչ է նման ցածրորակ արվեստի մուտքը Հայաստան: Միեւնույն ժամանակ գրաֆնինի դերից առանց խուսափելու տեղեկացնում ենք, որ չենք հանդուրժում մեր պետական խորհրդանիշների հանդեպ անհարգալից վերաբերմունքը»:

Երեկ տնօրենության որոշմամբ ապամոնտաժվել էր բեմական ողջ դեկորացիան, բեմը նախապատրաստելով իրենց հերթական ներկայացմանը: Մինչդեռ հանդիսատեսը տոմսերով թատրոնի դռների մոտ էր, իսկ նախասրահում շարունակվում էր մամլո ասուլիսը:

Անգլիացի արտիստը տեղյակ չէր, որ օրենսդրորեն Հայաստանի Հանրապետության պետական դրոշն անարգելը քրեորեն պատժելի է, ինչի համար Նայջել Չարնոֆը ներողություն խնդրեց: Նա ներկայացրեց, որ իր 25-ամյա բեմական կենսագրության մեջ որեւէ մեկին, մասնավորապես հանդիսատեսին գիտակցաբար վիրավորելու նպատակ ու ցանկություն երբեք չի ունեցել: «Այն, ինչ ես անում եմ բեմում, սիրո մասին է, սիրով է ներշնչված կյանքս եւ իմ արվեստը: Այս ամենը կյանքի, մահվան, սիրո, մարդկային հարաբերությունների մասին պատմություն է, որ միկրոտիեզերքի ձեւով եմ փորձում ներկայացնել»: Չարնոֆը երեւանյան բեմում փորձեր չի ունեցել, իսկ նրա ներկայացումները հաճախ են ուղեկցվում իմպրովիզացիոն անակնկալներով. «Բրիտանական խորհրդի» հայաստանյան ներկայացուցչությունում անտեղյակ են եղել հայկական դրոշի հետ կապված դրվագին: «Գիտեմ, որ չի կարելի այրել բրիտանական դրոշը, եւ շատ երկրներում եմ օգտագործել տվյալ երկրի դրոշները»: Իր մեկնաբանությամբ այս ամենն արված է մարդկանց միավորելու համար՝ ուղղված երկու երկրների համագործակցությանը:

«Ես սիրում եմ իմ գործը եւ ուզում եմ այսօր խաղալ», Նայջել Չարնոֆի այս ցանկությունը սակայն չկատարվեց: Ստանիսլավսկու անվան թատրոնի գեղարվեստական ղեկավար Ալեքսանդր Գրիգորյանը եւ տնօրենը խորապես վիրավորված էին. «Սա պետական թատրոն է եւ մեր բեմում նման անարգանք չէր եղել, սա բարոյական բոլոր նորմերից՝ թե՛ քաղաքական, թե՛ արվեստի էսթետիկայի տեսանկյունից, դուրս է: Նա փայլուն, տաղանդավոր արտիստ է: Բայց եւ որքան ավելի տաղանդավոր ես, այնքան ավելի պատասխանատու ես հանրության առաջ»:

Իր բեմական հաջողությունների մեջ նրա հայաստանյան դեբյուտն աննախադեպ էր եւ թերեւս անմոռանալի: Չնայած թատրոնի տնօրենության ներողամտությանը եւ մշակույթի նախարարության՝ ներկայացումն սկսելու թույլտվությանը, այն չկայացավ, որովհետեւ բեմի համապատասխան վերածեւավորման համար առնվազն 4-5 ժամ էր անհրաժեշտ: Հանդիսատեսին տոմսերը վերադարձնելու հնարավորություն տրվեց:

Կնոջը կացնով հարվածելուց հետո ինքնասպան է եղել

ԵՐԵՎԱՆ 1 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԻՆՖՈ: Հունվարի 31-ին ոստիկանության Մալաթիայի բաժնում քաղաքացիներից ահազանգ է ստացվել, որ 1944թ. ծնված Նարոլեոն Այվազյանը տանը կից անասնագոմում ինքնասպանություն է գործել՝ կախվելու միջոցով: Ինչպես հաղորդում է ՀՀ ոստիկանության մամլո ծառայությունը, մեկնած օրերաշիվ խումբը պարզել է, որ նույն օրը տանը, վիճաբանության ժամանակ Ն. Այվազյանը կացնով հարվածել է կնոջ՝ 1957թ. ծնված Ռիտա Այվազյանի գլխին, որը ստացած վնասվածքով դիմել է փախուստի, իսկ ամուսինն անասնագոմում ինքնասպանություն է գործել: Ռ. Այվազյանը տեղափոխվել է հիվանդանոց: Հանգամանքները պարզվում են: Քննությունը վարում է Մալաթիա-Սեբաստիա համայնքի դատախազությունը:

«Ազգի» կայքէջի հյուրն է Մանուկ Վարդանյանը

Այսօրվանից մինչեւ հաջորդ հինգշաբթի ժամը 16-ը, մեր թերթի կայքէջի հյուրը կլինի ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ Մանուկ Վարդանյանը: Կադաստրի ոլորտին առնչվող հարցերը մեր ընթերցողները կարող են նրան ուղղել այդ ընթացքում:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԶ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Լրագրողների սենյակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայություն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայություն / հեռ 529353
Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են
համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Ընտրություններին կարեւորվելու են ոչ միայն ձայները, այլեւ դրանք պահպանելու ընտրողների համարձակությունը

Ինչո՞ւ ընդդիմությունը թեկնածուներ չի դնում

«Հայելի» ակումբում ՀՀ նախագահի անվտանգության գծով խորհրդական Գառնիկ Իսագուլյանի եւ ՀՀՇ վարչության անդամ Արամ Մանուկյանի բանավեճն ընթացավ ակնկալելի սցենարով: Թեման նախընտրական օրեցօր լարվող խուլ ու բացահայտ պայքարն էր, եւ Արամ Մանուկյանը բարեխղճորեն թվարկեց այն բոլոր փաստարկները, որ ընդդիմադիր ելույթների բաղկացուցիչն են կազմում՝ իշխանությունների տխուր դիվանագիտության պատճառով շրջափակված, տարածաշրջանային ծրագրերից դուրս մնացած Հայաստան, Ղարաբաղի հարց, դոլարի արժեզրկման միջոցով սփյուռքի թալան, իշխանությունների անսկզբունք, անհայեցակարգ քաղաքականություն եւ այլն: Ահա այդպիսի մթնոլորտում են ծավալվում նախընտրական իրողությունները: Արամ Մանուկյանի կարծիքով այս անգամվա խորհրդարանական ընտրությունների որոշիչը լինելու են ոչ միայն ձայները, այլեւ ընտրող քաղաքացու դրանք պահպանելու համարձակությունը:

Եթե ընտրություններն ազատ ու արդար անցկացնելու քաղաքական կամքը չկա, գոնե քաղաքացիները պիտի կարողանան կամք դրսեւորել կեղծիքներն արգելելու համար: Շատ կուսակցություններ նույնկերպ են մտածում: ՀՀՇ-ն ինքը քաղաքական խորհրդակցությունների փուլում է, եւ ընտրություններին մասնակցելու է այն կուսակցությունների հետ, որոնք, վստահ է, չեն դավաճանի: Իրենց համար առայժմ այդպիսի կուսակցություն է միայն «Հանրապետություն»-ը: Ընտրությունների ժամանակ քաղաքացիների կամքը կազմակերպելու համար իրենք պատրաստ են համագործակցել նույնիսկ ոչ գաղափարակից ուժերի, նույնիսկ դաշնակցության հետ: Ինչպես 2003 թվականին, այնպես էլ հիմա, քաղաքացիների դժգոհության որոշակի դոզա է առկա, բայց այն ժամանակ կազմակերպիչ չկար, հիմա այդ սխալը պիտի ուղղել: Ընտրողները պիտի տեր կանգնեն իրենց ձայներին բողոքի ցույցերով, պիկետներով, համարձակությամբ:

ՖՈՏՈԼՈՒՐ

Գառնիկ Իսագուլյանը տրամաբանորեն հակառակ տեսակետներ ունի: Նա համոզված է, որ Հայաստանում նախընտրական մթնոլորտը խաղաղ է, արտաքին ոչինչ չի կատարվում, եւ իրադարձությունները հավանաբար այդպես էլ կծավալվեն:

Իսկ եթե այդպես է, ինչու Չարենցավանի քաղաքապետի ընտրություններում ՄԱԿ-ի առաջադրած թեկնածուն հանեց թեկնածությունը, ասելով, որ իր վրա ճնշում են գործադրել: Ո՞վ է գործադրել, ինչի՞ց կամ ումի՞ց է վախեցել իշխանական նույն դասի թեկնածուն: Գառնիկ Իսագուլյանը չի ընդունում այս հարցադրումների իրավացիությունը: Նրա բացատրությամբ, իշխանական ուժերը ընտրությունների ժամանակ մարտավարական նպատակներով պայմանավորվածությունների մեջ էին մտել, եւ թեկնածություն հանելը նույնպես այդ շրջանակում է եղել: «Իշխանությունները կամ կոալիցիոն ուժերը լավ են անում, ինչ անում են, ինչո՞ւ ընդդիմությունը իր թեկնածուն չդրեց»: Նույնկերպ խորհուրդ է տալիս ընդդիմությանը, խոսելու փոխարեն դատական հայցեր բացել նախընտրական շրջանում ընտրական օրենսգիրքը խախտող կուսակցությունների դեմ, որոնք փող ու կարտոֆիլ են բաժանում:

Նախագահի անվտանգության գործով խորհրդականն ակնարկեց, որ ընտրություններին կարող է մասնակցել ՀՀԿ ցուցակով, չնայած նրա ղեկավարած կուսակցությունը ավելի շատ հակված է դեպի դաշնակցությունը:

Ինքը կորոշի...

Կվերադառնա՞ արդյոք Լեւոն Տեր-Պետրոսյանը քաղաքականություն, կմասնակցի՞ ընտրություններին: Ըստ ՀՀՇ վարչության անդամ Արամ Մանուկյանի, Հայաստանի առաջին նախագահի վերադարձը միայն երկրի շահը կլինի. «Նա այն միակ անձն է, որ իր շուրջը կարող է հավաքել ընդդիմությանը, այն, ինչ չեն կարողանում անել մյուս լիդերները, որովհետեւ չեն կարողանում հաղթահարել առաջնորդ լինելու հավակնությունները»: Բայց նա ինքը կորոշի, իբրեւ անձ մասնակցե՞լ ընտրություններին:

ԿԱՐԻՆԵ ՂԱԼԻԵՎՅԱՆ

ԿԸՀ-ն հաստատեց ընտրական գործընթացների ժամանակացույցը

Մայիսի 12-ը խորհրդարանական ընտրությունների օր նշանակելու

Հայաստանի նախագահի հրամանագիրը հունվարի 31-ին մտավ ուժի մեջ, իր հետեւից նախապատրաստությունների ակտիվ փուլ բերելով եւ՝ կուսակցություններին, եւ՝ հասկապես իր իրավասությունները գործի դնել սկսող Կենտրոնական ընտրական հանձնաժողովին: ԿԸՀ-ն, բացի նախընտրական խնդիրներ լուծելուց, իր աշխատանքն էլ պետք է համապատասխանեցնի փոփոխված ընտրական օրենսգրքին եւ հենց երեկ գումարած իր նիստում դա էլ անում էր՝ միաժամանակ ողջ ընտրական գործընթացի ժամանակացույցը հաստատելով՝ առաջադրում, գրանցում, դիտորդներ, քարոզչություն եւ այլն:

ԿԸՀ նիստի այլ մանրամասներ մի կողմ թողնելով՝ ներկայացնենք նախընտրական եւ հետընտրական ժամանակացույցի բոլորին հետաքրքրող ամրագրումներից մի քանիսը:

Այսպես՝ ԱԺ համամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուների առաջադրման փաստաթղթերը ԿԸՀ են ներկայացվում փետրվարի 26-ից մինչեւ մարտի 3-ը, սա վերաբերում է՝ եւ կուսակցություններին, եւ դաշինքներին: Մեծամասնական ընտրակարգով թեկնածությունների առաջադրման փաստաթղթերը համապատասխան ընտրատարածային հանձնաժողով ներկայացնելու վերջին ժամկետը նույնպես փետրվարի 26-ից մարտի 3-ն է: Համամասնականի գրանցման համար փաստաթղթերը ԿԸՀ պետք է ներկայացվեն մինչեւ մարտի 28-ը, ժամը 18-ը, մեծամասնականի գրանցման փաստաթղթերը ԸԸՀ՝ նույն ժամկետում: Կուսակցությունների ցուցակների, ինչպես նաեւ մեծամասնական թեկնածուների գրանցումները պետք է կատարվեն ապրիլի 2-7-ը:

Նախընտրական հիմնադրամները ձեւավորվում են առաջադրման փաստը հավաստող ԿԸՀ տեղեկանքը ստանալու օրվանից: Ընտրական տեղամասերը կազմավորվում են քվեարկությունից ոչ ուշ, քան 45 օր առաջ, մինչեւ մարտի 28-ը: Թեկնածուներին եւ կուսակցություններին նախընտրական քարոզչության համար տրամադրվելիք եթերի յուրաքանչյուր րոպեի գինը հեռուստառադիոընկերությունները պարտավոր են հրապարակել ընտրություն նշանակելու օրվանից ոչ ուշ, քան 10 օր հետո, այսինքն՝ մինչեւ փետրվարի 11-ը: Նախընտրական քարոզչությունն իրականացվում է ապրիլի 8-ից մինչեւ մայիսի 10-ը:

Դիտորդները հավատարմագրվում են ընտրություն նշանակելուց հետո, բայց ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 10 օր առաջ, այսինքն՝ մինչեւ մայիսի 2-ը:

Ընտրական տեղամասերը հաստատվում, համարակալվում եւ տեղամասային կենտրոնները նշվում են քվեարկության օրվանից 45 օր առաջ, մինչեւ մարտի 28-ը:

Նրանց մասին տվյալները ԿԸՀ են ներկայացվում հաստատելուց հետո, երկօրյա ժամկետում:

Ընտրողների ցուցակները տեղամասային կենտրոններում փակցվում են քվեարկության օրվանից 40 օր առաջ՝ մինչեւ ապրիլի 2-ը:

ԿԸՀ այս նիստի հաստատած ժամանակացույցի եւ ընտրական գործընթացի կազմակերպման մասին այլ մանրամասներ կներկայացնենք առաջիկայում:

Մ. Խ.

«ՏԵՍԱԿԵՏ»

Իշխանական վերնախավը որակապես բարելավվելու կարիք ունի

Որ ունենանք մրցունակ իշխանություն

Նորաստեղծ «Տեսակետ» ակումբը, որը հավակնում է եւս մեկ ազատ խոսքի ամբիոն դառնալ, երեկ լրագրողների հետ առաջին հանդիպմանը հրավիրել էր «Օրինաց երկիր» (ՕԵԿ), Հայաստանի հանրապետական (ՀՀԿ) կուսակցությունների եւ Հայ հեղափոխական դաշնակցության (ՀՅԴ) «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության երիտասարդական թեւերի ղեկավարներին: 2003 թթ. նախագահական ընտրություններից հետո կոալիցիա կազմած հիշյալ կուսակցությունների երիտասարդական թեւերի ղեկավարները երեկ արդեն խոսում էին առաջիկա ընտրություններում իրենց անելիքներից եւ ակնկալիքներից:

Հանդիպմանը նախկին իշխանական ՕԵԿ եւ իշխանական ՀՀԿ ներկայացուցիչները զերծ չմնացին միմյանց «թեթեւ կսմիթներ» անելուց, իսկ դաշնակցականների ներկայացուցիչը անհամեմատ չեզոք էր: Օրինակ, ՕԵԿ երիտասարդական թեւի ղեկավար Սամվել Ֆարմանյանը, ընդգծելով իրենց մտահոգությունը երիտասարդ ընտանիքների բնակարանային դժվարությունների մասին, նշեց, որ իրենք կառավարությանը դիմել են նորաստեղծ ընտանիքների բնակարանների համար 8 մլրդ դրամ վարկ տրամադրելու համար եւ մերժվել են: ՀՀԿ երիտասարդական թեւի ղեկավար Կարեն Ավագյանն էլ անմիջապես հակադարձեց, թե ՕԵԿ-ը խնդրի համար կառավարությանը դիմել է, բայց չի նշել, թե բյուջեի որ տողի հաշվին այդ գումարը տրամադրեն:

ՀՀԿ երիտասարդական թեւի ղեկավար Կարեն Ավագյանը նախընտրական շրջանում իրենց անելիքները երիտասարդության մասով բաժանեց երեք ուղղության՝ երիտասարդության ակտիվ ներգրավվածությունը քարոզչությանը, աշխատանք նրանց հետ, ինչպես նաեւ նրանց կադրային ներուժի օգտագործումը: Առանց տարանջատելու երիտասարդների խնդիրները հասարակության եւ պետության խնդիրներից՝ Կարեն Ավագյանն ասաց, որ երիտասարդների հիմնախնդիրները լուծվելու են պետության եւ երիտասարդության հոգսերի հետ: Հետո էլ ավելացրեց, որ պետք չէ անընդհատ պահանջել պետությունից, այլ պետք է սեփական ներուժը ծառայեցնել ազգին եւ պետությանը:

Սամվել Ֆարմանյանը առաջիկա խորհրդարանական եւ նախագահական ընտրությունները հնարավորություն է համարում իշխանական էլիտայում որակական փոփոխություններ մտցնելու տեսանկյունից, որպեսզի մեր իշանությունն էլ մրցունակ լինի աշխարհում. «Չի կարող աշխարհը փոխվել, իսկ մենք մնանք անփոփոխ»: Նա հույս ունի, որ հոգեբանական առումով ընտրությունները լավ առիթ են, որ հասարակությունը վերագտնի իր հավատը սեփական ուժերի նկատմամբ, քաղաքական առումով՝ եզակի հնարավորություն կայացնելու ժողովրդավարական ընտրությունների ինստիտուտը եւ ի վերջո բարձրացնել Հայաստանի հեղինակությունը միջազգային ասպարեզում: Ս. Ֆարմանյանը նաեւ վստահեցրեց, որ ՕԵԿ նախընտրական պլատֆորմի վրա երիտասարդների խնդիրները դրված են լինելու ոչ միայն ձեւակերպումների տեսքով, այլեւ մատնանշվելու են հստակ լուծումները:

«Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության ղեկավար Հայկ Ասատրյանը ցավ հայտնեց, որ ընտրություններում երիտասարդները ոչ թե գործոն են լինելու, այլ գործիք: Հետո էլ դժգոհեց, որ քաղաքական հասունություն չկա, երիտասարդությունը հեռու է քաղաքականապես հասուն լինելուց, եւ որ իրենց ծրագրերն ուղղվելու են այդ հարցի կարգավորմանը:

«Կոնկրետ ձեր կուսակցությունների ընտրացուցակներում երիտասարդները քանի՞ տոկոս են կազմելու»՝ **«Ազգ»**-ի հարցին պատասխանելիս երեք երիտասարդ կուսակցականներն էլ խուսափեցին ներգրավվածության որեւէ տոկոս նշելուց, բայց վստահեցրին, որ երիտասարդության ներգրավվածությունը բավական զգալի է լինելու:

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Երկու ՍԻՄ հայտարարություն՝ ո՞վքեր են, վերջապես, իսկական ՍԻՄ-ականները

«ՍԻՄ նախագահություն» ստորագրությամբ երեկ ստացված հաղորդագրության մեջ ասվում է, որ երեկ ՍԻՄ նախագահ Հրանտ Խաչատրյանը, նախագահության անդամներ Կարեն Վարդանյանը, Սեդրակ Վարդանյանը, Հայր Խաչատրյանն ու մի շարք այլ ՍԻՄ-ականներ այցելել են ՍԻՄ կենտրոնական գրասենյակ՝ ի կատար ածելու ՀՀ վերաքննիչ դատարանի որոշումը եւ ստանձնելու իրենց օրինական պարտականությունները: Հրանտ Խաչատրյանը դրանից մեկ օր առաջ հայտարարել էր, որ սկսում է կուսակցության առողջացման գործընթաց, ինչն էլ սկսել է հենց երեկվանից:

Ավելացնենք, որ հունվարի 31-ով թվագրված եւ նույնպես «ՍԻՄ նախագահություն» ստորագրված բուխանյանական ՍԻՄ-ականների հաղորդագրությունն էլ էինք ստացել, որտեղ կային խաչատրյանական ՍԻՄ-ին ուղղված մեղադրանքներ, ըստ որոնց ՍԻՄ-ի դեմ հայցվորները կուսակցության հետ որեւէ առնչություն չունեցող պատասխանատուներ են, ովքեր անձնական խնդիրներ լուծելու համար օգտագործվում են պատասխանատուների կողմից, նպատակ ունենալով ընտրություններից առաջ վերահսկողության տակ դնել եւ կուսակցությունը, եւ «Իրավունք» թերթը:

Ինչպես երեւում է՝ ՍԻՄ-ի թեման դեռ չի սպառված, եւ շուտով նոր սկանդալային պատմություններ ի հայտ կգան երկփեղկված կուսակցության շուրջը:

Մ. Խ.

Փոստային կապի սակագները՝ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին

Կառավարությունը երեկ հավանություն է տվել «Փոստային կապի մասին» եւ «Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մասին» օրենքների փոփոխություններին, որոնց արդյունքում փոստային կապի ծառայությունների սակագների, դրանց ձեւավորման սկզբունքների ու կարգի սահմանման լիազորությունը տրվում է հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին: Վերոնշյալ օրինագծերը համարվել են անհետաձգելի եւ առաջարկվել Ազգային Ժողովին քննարկել եւ հաստատել մեկամսյա ժամկետում:

Ա. Մ.

ԱԶԳ

Մերիտարմական

2007 թ. մայիսին Հայաստանի Հանրապետությունում կայանալու են Ազգային ժողովի ընտրությունները, որոնց մասնակցելու են այսօր գործող կուսակցություններից շատերը: Այս պայմաններում հետաքրքրական է իմանալ, թե ինչ տեսք ունի Հայաստանի կուսակցական դաշտը: Հարցին պատասխանելու համար նախ անհրաժեշտ է պարզել, թե որպես քաղաքական ինստիտուտ ինչ է կուսակցությունը:

Ավելի քան 150 տարի առաջ ֆրանսիացի փիլիսոփա Ա. դը Թոքվիլը գրել է. «Ժողովրդավարական երկրներում միություններ ստեղծելու կարողությունը հատարակական կյանքի սկզբնահիմքն է: Հասարակական կյանքի մնացած բոլոր բնագավառների առաջընթացը կախված է այդ բնագավառում ունեցած հաջողությունից»:

Փիլիսոփան հատուկ շեշտել է քաղաքացիական հասարակության եւ պետության փոխադարձ կարի ունիվերսալ մեխանիզմի ստեղծման անհրաժեշտությունը: Այդ մեխանիզմը ոչ միայն միջնորդ է հասարակության եւ իշխանության փոխհարաբերություններում, այլեւ քաղաքացիական հասարակության կողմից իշխանություններին վերահսկելու միջոց: Այդ մեխանիզմի առկայությունը վկայում է քաղաքացիական հասարակության հասունության եւ ինքնակազմակերպման կարողության մասին: Այդ միությունները (կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, ասոցիացիաներ, ակումբներ եւ այլն) պետական քաղաքական ինստիտուտներին են ներկայացնում հասարակությունում առկա տարբեր խմբերի շահերը, իսկ այդ ինստիտուտները, փոխհամաձայնեցնելով այդ խմբերի՝ հաճախ միմյանց հակասող շահերը, աջակցում են հասարակության կայունությունը եւ առաջընթացը:

Հասարակության քաղաքական թաքտաբբեմում գործում են բազմաթիվ ուժեր, որոնցից ամենաազդեցիկները կուսակցություններն են:

Կուսակցություն (party) բառը լատինական ծագում ունի եւ թարգմանվում է որպես «մաս», «կողմ»: Քաղաքական կուսակցություն է կոչվում մարդկանց կազմակերպված այն խումբը, որի անդամները քաղաքական նույն ծրագրի կրողներ են եւ ձգտում են օրինական ճանապարհով հասնել իշխանության: Կուսակցությունը ներկայացնում է այնպիսի քաղաքական կազմակերպություն, որը արտահայտում է սոցիալական խմբի (կամ հարակից խմբերի) շահերը եւ միավորում դրանց առավել ակտիվ ներկայացուցիչներին: (Հայաստանում ընդամենը մեկ կուսակցություն է թերի կերպով համապատասխանում շարադրված տեսակետին): Ժողովրդավարական երկրներում կուսակցությունները քաղաքացիական հասարակության լայն շերտերի շահերի արտահայտման եւ ներկայացման ձեւերից մեկն են: Կուսակցությունը միավորում է սոցիալական ընդհանրությունների բազմաբնույթ պահանջմունքները եւ ձեւավորում է դրանք որպես իշխանություններին ներկայացվելիք պահանջներ: Այդ պատճառով ժողովրդավարական երկրներում ընտրողների կեսից ավելին ունեն կուսակցական ուղղվածություն:

Քաղաքական կուսակցությունների առավել կարեւոր հատկանիշներն են.

1. քաղաքական ծրագիրը,
2. կուսակցության կանոնադրությունը,
3. ղեկավար մարմինը եւ կուսակցական աparատը,
4. տեղական կազմակերպությունների տարածված ցանցը,
5. պետական ներկայացուցչական մարմինների ընտրություններին ակտիվ մասնակցությունը,
6. կուսակցության անդամների ֆիքսված (օրենքով սահմանված) թվականակը եւ համակիրների չֆիքսված թվականակը:

Քաղաքական կուսակցությունները իրականացնում են հետեւյալ գործառույթները.

1. շահերի ներկայացման,
2. շահերի փոխհամաձայնեցման եւ ընդհանրացման,
3. քաղաքական սոցիալիզացիայի,
4. հաղորդակցման,
5. կանոնների (օրենքների) մշակման,
6. քաղաքական հավաքագրման,
7. քաղաքական ինստիտուտների պատասխանից (1998), կուսակցությունը մեկ տարի անց «մահացավ»: Այսօր այդ կուսակցությունը այլեւս չկա:

2. Այդ կուսակցությունների ազդեցությունը կախված է լիդերի ազդեցությունից: Եթե տվյալ կուսակցության լիդերն ազդեցիկ է. ա) ունի ընդգծված խարիզմա (օրինակ՝ Կ. Դեմիրճյանը ՀԺԿ-ն ստեղծելու ժամանակ), բ) զբաղեցնում է ազդեցիկ քաղաքական պատասխանատու (ինչպես, օրինակ, երբ Ա. Բաղդասարյանը ընտրվեց ԱԺ նախագահ), գ) իշխանությունների հետ լավ հարաբերություններ ունեցող գործարար է (օրինակ՝ Գ. Ծառուկյան), ապա այդ կուսակցությունը նույնպես ազդեցիկ է քաղաքական կյանքում, սակայն լիդերի՝ ազդեցության թուլացմանը զուգընթաց, «պակասում» է տվյալ կուսակցության ազդեցությունը: Բնակա-

Հայաստանի Հանրապետության կուսակցական դաշտի համայնապատկերը ընտրարշավի նախաշեմին

փոխհարաբերությունների կանոնների ներդրման եւ կիրառման:

Հայաստանում, ինչպես նաեւ հետխորհրդային այլ հանրապետություններում, քաղաքացիական հասարակության բացակայության պատճառով, կուսակցությունների ձեւավորման գործընթացը, համեմատած զարգացած ժողովրդավարական երկրներում կատարվող նման գործընթացի հետ, ունի հակառակ տրամաբանություն (սկզբում առաջանում է կուսակցության ղեկավարությունը, որը հետո սկսում է փնտրել կուսակցության անդամների եւ ընտրողների): Կուսակցությունները առաջանում են ոչ թե որպես քաղաքացիական հասարակության եւ իշխանության միջեւ կարի միջոց, այլ որպես «նեղ» խմբակային շահեր արտահայտող կլիենտելաներ: Դրանք քաղաքական գործիչի շուրջը համախմբված կողմնակիցների միություններ են: Այդ կողմնակիցները կոնկրետ առաջնորդի կլիենտներ են, որոնց պահանջները առաջնորդը ներկայացնում է իշխանական կառույցներում (սրա լավագույն օրինակն է ՕԵԿ նախագահ Ա. Բաղդասարյանի՝ ԱԺ նախագահ ընտրվելուց հետո պետական աparատը օբեկտներով «լցնելու» փաստը): Կլիենտելային բնույթ ունեցող կուսակցության «ներսում» կուսակցության անդամները կապված են անձնական լոյալության եւ հավատարմության սկզբունքով: Այդ կուսակցությունների անդամների քանակը հաճախ սահմանափակվում է կուսակցության ղեկավարությամբ եւ նրանց փոքրաթիվ կողմնակիցներով (Հայաստանի քաղաքական դաշտում գործող բազմաթիվ կուսակցություններ հաստատում են վերոնշյալ փաստը):

Կլիենտելային բնույթ ունեցող կուսակցությունները ունեն ընդհանուր հատկանիշներ.

1. Այդ կուսակցությունները «ժամանակավոր» բնույթ ունեն: Նրանց «կյանքը» կախված է կուսակցության առաջնորդի (լիդերի) քաղաքական գործունեությունից: Երբ լիդերը քաղաքական ակտիվ գործունեություն է ծավալում, տվյալ կուսակցությունը «գործում է»: Սակայն երբ լիդերը այս կամ այն պատճառով դուրս է գալիս քաղաքական կյանքից, կուսակցությունը «մահանում է»: Լավագույն օրինակ է Ռուսաստանի նախկին վարչապետ Վ. Չեռնոմիրդինի ստեղծած «Մեր տունը Ռուսաստանն է» կուսակցությունը: Երբ Վ. Չեռնոմիրդինը նշանակվեց վարչապետ (1993), նա ստեղծեց նշված կուսակցությունը, որին անդամագրվեցին բազմաթիվ ազդեցիկ գործիչներ՝ նախանգապետներ, գործարարներ, մշակութային գործիչներ եւ այլն: Կուսակցությունը «ակտիվ» գործում էր: Սակայն, երբ վարչապետին ազատեցին

նաբար, պակասում է նաեւ կուսակցության անդամների թիվը (լավագույն օրինակ է Ս. Երիցյանի, Թ. Մանասյանի եւ Հ. Հովհաննիսյանի «փախուստը» իրենց քաղաքական կառույցներից):

3. Այդ կուսակցությունները ետակենտրոն են: Նման կուսակցությունները ձեւավորվում են կոնկրետ լիդերի շուրջը եւ տվյալ կուսակցության անդամների համար «խարիզմատիկ դեր» ունի հենց այդ լիդերը: Այդ իսկ պատճառով կլիենտելային բնույթ ունեցող կուսակցությունները միմյանց հետ երբեք չեն միավորվում (այսօր շատերն են խոսում ընդդիմադիր կուսակցությունների հնարավոր միավորման մասին, սակայն, նկատի ունենալով այդ կուսակցությունների կլիենտելային բնույթը, կարծում ենք, որ դա անհնար է):

4. Այդ կուսակցության կերպարը ընտրողների կողմից նույնացվում է տվյալ կուսակցության ղեկավարի հետ: Դրա հետեւանքով ընտրողները վերակում են ոչ թե այդ կուսակցության ծրագրի օգտին, այլ տվյալ կուսակցության լիդերի նկատմամբ ունեցած անձնական համակրանքի կամ հակակրանքի հիման վրա:

5. Այդ կուսակցությունների կողմից իրականացվող խմբակային շահերի ներկայացուցչությունը շատ աննշան է, որի հետեւանքով դրանք «թույլ» են կապված հասարակությանը:

6. Այդ կուսակցությունները հետեւությամբ «չեզոքացվում» են ընտրարշավի ժամանակ, որի համար անհրաժեշտ է. ա) կառավարել այդ կուսակցությանն անդամագրված անձանց մոտիվացիան, բ) «աղմուկ» ստեղծել կուսակցության լիդերի եւ անդամների միջեւ իրականացվող կոմունիկացիոն հոսքերի ճանապարհին (այս քաղաքականությունը իրականացնում են մրցակից կուսակցությունների քաղաքական տեխնոլոգները):

Հայաստանի քաղաքական դաշտում իր ուրույն տեղն է զբաղեցնում նաեւ Դաշնակցությունը, որը չունենալով կլիենտային բնույթ, իր գործունեությամբ նմանվում է հասարակական կազմակերպության, որի գլխավոր «նպատակը» կոռուպցիայի դեմ պայքարելն է: Նման քաղաքականության արդյունքում ՀՅԴ-ն կուսակցական դաշտից կարող է տեղափոխվել հասարակական կազմակերպությունների դաշտ, իսկ սա թուլացնում է Դաշնակցությանը:

Կուսակցությունների վերաբերյալ տեսական գիտելիքները անհրաժեշտ են ընտրարշավը ճիշտ ծրագրելու համար, քանզի դրա կետերից մեկը մրցակիցների նկատմամբ համապատասխան քաղաքականության մշակումն է:

ԱՐՄԵՆ ԲԱՐԱՅԵՎ

ԺՈՂՈՎՈՒՐԴ ԵՎ ԴԵՄՈԿՐԱՏԻԱ

Հայկական Բաբելոնը

21-րդ դարի առաջին տասնամյակում

Ինձ զարմացնում է Հայաստանի ընդդիմությունը, որ ոչ մի նոր բան չի կարողանում մտածել, բացի կողմնացույցի տարբեր կողմերից թելադրվող, արտաքնապես ու բովանդակությամբ տարբեր ձեւաչափերից, որոնց բարձր ու ցածր տոնայնությամբ տարբեր քոռուփուչ կարգախոսները ոչինչ չեն հուշում ժողովրդին, բան չեն ասում նրա սրտին ու հիշեցնում են մի տարի առաջվա, հինգ, տասը տարի առաջվա՝ իր աչքով արդեն մի քանի անգամ տեսածը, ու գոնե աչք խաբելու համար նոր բան մտածողը դեռ չկա: Ու բանն այստեղ ոչ թե ու ոչ այնքան մարդկանց մեջ է կամ այն հանգամանքում, որ ընդդիմադիր գործիչների մեջ նոր մարդիկ չկան, այլ այն է, որ մեր քաղաքական էլիտան շատ ու շատ հեռու է ժողովրդից, նրան սրտամոտ չէ, չգիտե նրա հոգսերը, չգիտե նրա երազանքներն ու ձգտումները եւ նրա մասին դատում է միայն իր կուսակցական պատուհանից ու իր կուսակցության ցանկությունների հանրագումարից ելնելով, արեւմտյան ժողովրդավարության վճռարվի սեմինարներից դասերը քաղած եւ դրանք անգիր արտասանելով: Ստացվում է հայերեն լեզվով խոսող երկու զանգված, մեծը՝ ժողովուրդը,



փոքրը՝ կուսակցական ընդդիմությունը, բայց նրանք միմյանց չեն հասկանում այնպես, կարծես բաբելոնյան աշտարակաշինությունը հենց նոր է տեղի ունեցել:

Ինձ զարմացնում են իշխանական կուսակցությունները ներկայացնող կուսակցապետները, բարձր պատասխանատու-կուսակցականները, բոլոր տեսակի առաջին-երկրորդ-երրորդ դեմքերը, որոնք ամեն օր, վերջին տասը տարում հունը գծած մեկ ինտերցիայով, ընտրություններին միտված հայտարարություններ են անում, ասենք, դեռ 1986 թվականի ոգով, երբ գիտենք, որ ասված խոսքի տակ ոչինչ չկա, այսինքն՝ կա այդ խոսքից հիմնավորապես տարբեր մտածող մարդ, ու խոսքը զանգվածի մտածածից տարբեր արտասանվում է պարադոքսի պատճառով: Բայց հիմա, նոր ընտրություններից երեք ամիս առաջ էլի վարվում են նույն կերպ, կուսակցական ու նյութական զանազան շահերից դրդված: Անհիրականանալի եւ կեղծ բաներ են ասում՝ ոչ մի անգամ փորձ չանելով սանալ ժողովրդի միջինացված պատկեր, որը բոլորովին տարբեր բան է ուզում թաքկոցված առաջարկվողից:

Ինձ զարմացնում է, որ մտածող մարդիկ ընդամենը մեկ երկընտրանք ունեն՝ լինել կամ իշխանության, կամ ընդդիմության հետ, եւ ոչ ոք, իրենց մտավորական կոչող մարդկանցից ոչ ոք չի փորձում դուրս գալ առաջարկվող սխեմայից եւ վերջապես մտածել՝ ինչ է ուզում արդեն 21-րդ դարի առաջին տասնամյակ ոչ դրած հայը, ինչ առաջարկել նրան, որ երկրի ապագային վերաբերող փաթեթի մեջ համատեղված տեսնի սեփական ճակատագիրը, ու ցավալի, ցավալի կերպով չառանձնացնի սեփական ճակատագիրն ազգային ջոջերի ճակատագրից, իր առջեւ դրված նպատակները՝ նրանց առաջ դրված նպատակներից, չդառնա սեփական մտքերն ու ձգտումները թաքցնող, առերես ժպտացող, առաջարկվողը տարբեր շահագրգռիչներով կատարող զանգվածի, որը սակայն ներսում ատելություն է կուտակում իրեն արհամարհելու դիմաց, հացի սեղանների շուրջը երկխոսելու մակարդակով հենց ինքն արհամարհում ազգային ջոջերին ու թիկնազորով շրջողներին եւ անօգնական թոթվում ուսերը՝ լավագույն դեպքում հայտնի խոսքն ասելով՝ «մեր բակում էլ արեւ կլինի»: Ու օտարվում-օտարվում է իր «սերուցքից»՝ պետականություն ունեցող երկրի մեջ ստեղծելով երկու պետություն՝ իշխանություն ունեցողների պետությունը եւ չունեցողների պետությունը:

Ինչո՞ւ պիտի Բելգիայի նման երկրում, որը ժողովրդավարություն տարածողներից մեկն է համարվում, հավասար թվով ապրող հոլանդացիները, ֆրանսիացիներն ու գերմանացիներն, այնուամենայնիվ, ստեղծեն համայնքային կոմունաներ, որտեղ չգրված օրենք է համայնքի հասարակ անդամի սոցիալական եւ իրավական պաշտպանվածությունը, իսկ մենք՝ հայերս, ազգային անվտանգության պաշտոնական ռազմավարության փաստաթղթին զուգահեռ, չունենանք ոչ պաշտոնական «Հայերի ռազմավարություն», որը 10 պատվիրանի նմանությամբ մեծ ու փոքր նպատակներ ու կեցության կանոններ կսահմանի, որոնց չենթարկվողը հասարակությունից մերժված կլինի: Ու այնտեղ ազգային մեծ շահերի կողքին կգործեն այս կարգի նաեւ փոքրերը, օրինակ, որ Հայաստանում հայ բոմժ չպետք է լինի, ու այդ պատվիրանի իրականացման շատ առարկայական մեթոդներ նշվեն: Օրինակ, այսպիսի. ամեն տարի հրապարակվող խոշոր հարկատուների ցուցակների ազգանունատերերը ոչ թե բարեգործություն պետք է անեն եւ շնորհակալության ու փառաբանման սպասեն, այլ նրանցից ամեն մեկն ամեն տարի տասը բոմժի պետք է լողացնի-մաքրի եւ աշխատանքի ընդունի՝ որպես սուրբ պարտականություն: Դե հիմա այս տարվա ցուցակի 300-ը բազմապատկեք 10-ով, ու տեսնենք՝ գոնե Երեւանում բոմժ կմնա՞: Հենց սա է ազգային ռազմավարությունը: Ու էդ տասը պատվիրանները մտածող, «հացի խնդիր» չլուծող մտավորականները պետք է հայտնաբերվեն մի օր, եթե չենք ուզում հավերժ ազգերի պոչից քայլենք, եթե ուզում ենք բոլորիս ներսում դրված ծրագիր ունենալ: Ինչո՞ւ մի աղջիկ իր տանը նստած կարող է «Հայկական նախագիծ» մտմտալ, իսկ տարբեր ծոռում, երկարաունչ եւ սարսափազդու վերտառություններով «ռազմավարական կամ հետազոտական կենտրոնները» միայն «Ժողովրդավարություն» բառը ծամծմեն՝ ամեն մեկն այն հասկանալով ըստ իր նպատակի «գյորա»: Ժողովրդավարությանը ոչ ոք դեմ չէ, եթե կուզեք հայերիս արդեւակերպի մեջ, աշխարհում տարածված լինելու եւ ի վերջո ուրիշների բարերից այս ու այն շյուղը տուն բերելու պատճառով՝ ուրիշ ազգերից ավելի ժողովրդավարական ներուժ կա: Միայն եկեք ճշտենք, թե, վերջապես, ճիշտ ընկալո՞ւմ ենք «ժողովրդավարություն» բառի իմաստը: Ավելորդ չէ հիշեցնել, որ հենց ընդդիմադիր հայտնի գործիչներից մեկը, իր երկարամյա գործունեության փորձառությունն ուսած, վերջերս դառնությամբ ասաց. «Արեւմուտքը ժողովրդավարությունը հասկանում է այնպես, ինչպես իրեն է պետք»:

ՄԱՔՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱԶԳ **Միջազգային**

Դինքի սպանության գործով հետաքննության նախաձեռնություն Թուրքիայի ներքին գործերի նախարարի եւ վարչապետի դեմ

Հրանտ Դինքի սպանության գործով կալանվել էին 5 մեղսակիցներ, որոնց թվում մարդասպան Օգյուն Սամաստը, պատվիրատու Յասին Հայալը եւ որպես իրազեկիչ ներկայացվող Երհան Թունջելը: «Ենի շաֆաքը», հիմք ընդունելով ցուցմունքներից հրաժարվելու Թունջելի արարքը, հարց է բարձրացրել, թե նրան ո՞վ է հովանավորում եւ հնարավոր է համարել, որ Թունջելն իրականում ոչ թե «իրազեկիչ» լինի, այլ Հայալի հանցագործ խումբը Դինքի սպանության բուն կազմակերպիչներին կարող օղակ:

Հունվարի 29-ին թուրքական ոստիկանությունը Սամսունում եւ Տրապիզոնում կատարել էր 2, իսկ 30-ին՝ 3 ձերբակալություն: Հունվարի 31-ին Սամսունում նոր ձերբակալություն է կատարվել: Ներկայումս ձերբակալվածների թիվը հասել է 6-ի, որոնց հարցաքննությունը շարունակվում է: Այդ ընթացքում վարչապետ Էրդողանի հունվարի 26-ի կարգադրությամբ պաշտոնից ազատվել էին Տրապիզոնի նահանգապետն ու անվտանգության վարչության պետը: Ավելին, նրանց թերացումները հետաքննելու նպատակով Անկարայից նույն օրը Տրապիզոն էր գործուղվել երկու տեսուչ: Հունվարի 31-ին երկու տեսուչ եւս գործուղվել է Տրապիզոն: Դրան է հետեւել մեկ տեսուչի գործուղումը Սամսուն, որտեղ իրականացվել էր մարդասպանի ձերբակալությունը:

Թուրքական թերթերը նախորդ օրվա համարներում նշում էին, որ Տրապիզոնի նահանգապետի եւ անվտանգության վարչության պետի թերացումները բացահայտելուց հետո հետաքննության են ենթարկվելու ինչպես Սամսունի, այնպես էլ Անկարայի անվտանգության վարչության պետերը: CNN-turk-ի տվյալներով, Տրապիզոն գործուղված առաջին երկու տեսուչներն այնտեղից երեկ մեկնել են Սամսուն, որտեղ կշարունակեն հետաքննել:

Հիշեցման կարգով նշենք, որ թերացումների մեղադրանքով Անկարայի փաստաբանների միությունը դատական հայց էր ներկայացրել Սամսունի փոխքաղաքապետին, իսկ Մարդու իրավունքների սամսունյան մասնաճյուղը՝ միեւնույն քաղաքի անվտանգության վարչության պետի նկատմամբ:

«Մայր հայրենիք» կուսակցության խմբակցությունն էլ պատրաստվում է խորհրդարանական հետաքննություն սկսել Թուրքիայի Ներքին գործերի նախարար Աբդուլքադիր Աֆսուի նկատմամբ: Այդ մասին հունվարի 30-ին Թուրքիայի ազգային մեծ ժողովում՝ Մեջլիսում հայտարարեց «Մայր հայրենիք» կուսակցության նախագահ Էրքան Մումջուն, որի հայտարարությունը հեռարձակվում էր թուրքական հանրային հեռուստատեսությամբ:

Նա ասաց, որ՝ «իրազեկված լինելով Հրանտ Դինքի դեմ մահափորձի կազմակերպման մասին, ինչո՞ւ չեք աղահովել նրա անվտանգությունը, դրանով ո՞ւմ եք փորձում պաշտպանել» հարցով իրենք դիմել են ներքին գործերի նախարարությունը եւ ստացել հետեւյալ պատասխանը. «Քեզ թիկնապահ ենք տրամադրել»: Մումջուն ընդգծեց, որ իր խմբակցությունը ներքին գործերի նախարար Աֆսուի դեմ խորհրդարանական հետաքննություն ծավալելու օրինակին հետեւեց Ժողովրդահանրապետական կուսակցության նախագահ Դենիզ Բայքալը: Նա հեռուստաէկրանից ասաց, որ Դինքի սպանությունը բացահայտել է այն լուրջ խնդիրները, որոնց առջեւ են կանգնած անվտանգության ծառայությունները, ինչը քաղաքական պատասխանատվություն է ենթադրում, ուստի չի կարելի դրանից խուսափել՝ պաշտոնից ազատելով անվտանգության վարչության մի քանի պետերին:

Վերջում Դենիզ Բայքալը նշեց, որ եթե պետանվտանգության ծառայությունները շարունակաբար 11 ամիս նախազգուշացվում են Հրանտ Դինքի սպանության մասին, եւ որեւէ քայլ չի ձեռնարկվում, ապա դա պատասխանատուն կառավարությունն է եւ իր կուսակցության խմբակցությունը որոշել է այս շաբաթ սպանության մեջ վարչապետ Էրդողանի եւ ներքին գործերի նախարար Աֆսուի պատասխանատվությունը քննության ենթարկելու առաջարկ ներկայացնել Մեջլիսի նախագահություն:

Հ. ՅԱՐԵՏՅԱՆ

Իրանին հասկացվող գումարների զգալի մասը վատնվում է

Ամերիկյան աուդիտորական ծառայությունների հրապարակած զեկուցագրում ասվում է, որ Իրաքի տնտեսության վերականգնման հարկվող վիթխարի գումարների զգալի մասը շռայլվում է:

Եռամսյակային զեկուցագրում բերվում են կաշառակերության եւ անտնտեսվարության աղաղակող օրինակներ: Այսպես, Բաղդադում ոստիկանների վերապատրաստման նպատակով կառուցված եւ երբեւէ չօգտագործված ճամբարում սարքված է օլիմպիական կարգի լողավազան: Մինչդեռ ֆինանսական օգնության շրջանակներում ամերիկացիներից ստացվող միլիարդներն Իրաքի կառավարությունը չի օգտագործում:

Փաստաթղթի հրապարակումը համընկավ Կոնգրեսում նախագահ Բուշի վարչակազմի այն առաջարկության քննարկմանը, որով նախատեսվում է լրացուցիչ 1,2 մլրդ հատկացնել Իրաքի վերականգնմանը:

Գլխավոր տեսուչ Սյուզան Բոուենի ղեկավարությամբ պատրաստված զեկուցագիրն Իրաքի իշխանական կառույցներում տիրող համատարած կաշառակերության մռայլ պատկեր է ներկայացնում: Փաստաթղթում «խոր տագնապ» է արտահայտվում բյուջետային առդյունավետ քաղաքականություն վարելու Իրաքի կառավարության անկարողության կապակցությամբ:

Փաստաթղթում նաեւ բերվում են վատնումների եւ չարտոնված ծախսերի փաստեր: Այսպես, վերոհիշյալ չօգտագործվող ճամբարում լրացուցիչ աշխատանքներ կատարելու համար Իրաքի ներքգործնախարարությունը ստորագրել է 4,8 մլն դոլարի պայմանագիր, առանց համաձայնեցնելու ԱՄՆ պետդեպարտամենտի հետ:

Հոլանդիայի թագուհին կայցելի Թուրքիա

«Ասոշիեյթեդ պրեսի» հաղորդագրության համաձայն, Նիդերլանդների Բեատրիս թագուհին Թուրքիա է այցելելու փետրվար ամսին երկու երկրների հարաբերություններն ամրապնդելու նպատակով: Թագուհուն ընկերանալու է ավագ որդին, թագաժառանգ Վիլեմ Ալեքսանդրը, իր կնոջ հետ, որն էլ երրորդ զավակի ծնունդին է սպասում: Նախատեսվում են այցելություններ Անկարա, Սամսուն եւ Քայսերի (Կեսարիա) քաղաքները:

«Երկու երկրները ակտիվ հարաբերություններ ունեն մի շարք ոլորտներում, որոնց թվում են գյուղատնտեսությունը, քաղաքաշինությունը, արդարադատությունը, մշակույթը եւ կրթությունը», ասված է կառավարության հակիրճ հայտարարության մեջ:

Երկու երկրների հարաբերությունները անցյալ տարվա վերջերին կարճ ժամանակով լարված էին, երբ խորհրդարանական ընտրությունների շեմին գլխավոր կուսակցություններից Քրիստոնյա դեմոկրատներն ու լեյբորիստները իրենց օրենսդիրների ցուցակից դուրս հանեցին թուրք ազգության թեկնածուներին, այն պատճառով, որ նրանք հրաժարվում էին հայերի կոտորածները ցեղասպանություն որակել:

Այս մասին է գրել «Արմինյն միրոր սփեքթեյթրի» հունվարի 20-ի համարը:

Հ. Օ.

Դանիայում ուժի մեջ մտավ ծխելու արգելքը

Փետրվարի 1-ին Դանիայի հասարակական վայրերի մեծ մասում ուժի մեջ մտավ ծխելն արգելող օրենքը: Խոսքը ձեռնարկությունների, հիմնարկների, կրթական եւ բուժական հաստատությունների, հասարակական տրանսպորտի, խանութների, առեւտրի կենտրոնների եւ բարերների մասին է:

Բացառություն են կազմում ռեստորանները, սրճարանները, խաղասները եւ պարասրահները, որտեղ ծխելու արգելքը կգործի 2008 թ. հունվարի 1-ից:

Ծխելու արգելքը վերաբերում է մոտ 15 միլիոն ֆրանսիացիների: Եթե հաշվի առնենք նաեւ մերթ ընդ մերթ ծխողներին, նրանց թիվը կհասնի 25 միլիոնի, որ կազմում է երկրի բնակչության մոտ 40 տոկոսը:

Արգելքը խախտողներին սպառնում է 68 եվրո տուգանք, իսկ հիմնարկների ու ձեռնարկությունների կարգազանց ղեկավարները կտուգանվեն 135 եվրոյով:

Նոր օրենքի կատարման ընթացքը վերահսկում են 175 հազար պետական ծառայողներ՝ իրավապահներ, սանտեսուչներ, անվտանգության ինժեներներ եւ լիազորված այլ անձիք:

Հիվանդանոցներում, դպրոցներում, վարժարաններում ծխելու արգելքը կատարյալ է. նույնիսկ բակերում չի կարելի ծխել: Ձեռնարկություններում թույլատրվում է բացել «ծխարաններ»: Բայց ներկայացվող պահանջներն այնքան խիստ են, որ ոչ ձեռնարկատերեր կուզենան նման քայլի դիմել, նշում է Ֆրանսպրես գործակալությունը:

Ծխելու արգելքը չի տարածվում բաց կառամատույցների եւ ջերմանավերի տախտակամածների վրա: Հյուրանոցների կենսորները եւ ծերանոցների բնակիչները կարող են ծխել իրենց սենյակներում, եթե, իհարկե, հաստատությունը դա չի արգելում:

Փոքր եւ միջակ ձեռնարկությունների ընդհանուր կոնֆեդերացիան իշխանություններին խնդրել է «հանդուրժող» լինել, պնդելով, թե նոր օրենքը դժվար կլինի կիրառել փոքր ձեռնարկություններում:

Պաշտոնական վիճակագրության համաձայն, ծխելու հետ կապված հիվանդություններից Դանիայում ամեն տարի մոտ 66 հազար մարդ է մահանում:

Բջջային հեռախոսի տեւական օգտագործումը կարող է քաղցկեղ առաջացնել

Բջջային հեռախոսից մի քանի տարի տեւականորեն օգտվելը կարող է գլխուղեղի չարորակ ուռուցքների պատճառ դառնալ:

Վերջերս Հյուսիսային Եվրոպայի երկրներում անցկացված հետազոտությունները խորացնում են բջջային կապի՝ վտանգներին առնչվող կասկածները: Հետազոտությունների արդյունքների համաձայն, ավելացել է գլխուղեղի քաղցկեղային ուռուցքների թիվն այն մարդկանց շրջանում, որոնք առնվազն 10 տարի օգտագործել են բջջային հեռախոսներ եւ բավական երկար են խոսել:

Հատկանշական է, որ ուռուցքն առաջանում է գլխի այն կողմում, որտեղ սովորաբար բռնել են հեռախոսը:

Ֆինլանդիայի հակաքաղցկեղային հանձնաժողովի անդամ Աննա Լակոլան իր շվեդ, նորվեգ եւ բրիտանացի գործընկերների հետ հարցում է անցկացրել գլխուղեղի հենահյուսվածքի չարորակ ուռուցք ունեցող 1500 հիվանդների շրջանում: Արդյունքները հրապարակված են International Journal of Cancer online կայքէջում:

Պարզվում է, որ 10 տարուց ավելի տեւականորեն օգտագործվող բջջային հեռախոսը քաղցկեղային ուռուցքի գոյացման վտանգն ավելացնում է 39 տոկոսով: Շվեդ գիտնական Լենարտ Հարդելը պնդում է, որ արդիական բջջային հեռախոսներով 2000 ժամից ավելի խոսելու դեպքում վտանգի հավանականությունն աճում է 3,7 անգամ:

Բրեմենցի համաճարակաբան Էբերհարդ Գրեյզերը կենսաբանական առումով 10 տարին անհրաժեշտ ժամկետ է համարում օրգանիզմի վրա հեռախոսի ազդեցության հետեւանքները դիտարկելու համար: Նրան համամիտ է Մյունխենի համալսարանի աշխատակից Օսսո Պետրովիչը:

Պ. Ռ.

ՄՅԼԸՆՏՊՈՒՆՔ ՈՒՍՍԱԿԱՆ ԳԱՅԻՆ

Ադրբեջանական գազը կհասնի Հունաստան եւ Իտալիա

Իտալիան եւ Հունաստանը գազամուղ կառուցելու պայմանագիր են ստորագրել: Նոր գազամուղով Հունաստանն ադրբեջանական գազ կստանա արդեն 2008 թ., Իտալիան եւ այլոյան երկրները՝ 2011 թ.:

Ֆրանսպրեսի տվյալներով, եվրոպական նոր գազատարի շինարարությունն սկսվել է եկող տարի: Խողովակատարի շինարարությունն սկսվել է եկող տարի: Խողովակատարի 220 կիլոմետրը կանցնի ջրի տակով: 300 կիլոմետրանոց գազամուղը Եվրոպային թույլ կտա նվազեցնել էներգետիկ կախումը Ռուսաստանից, որը փաստորեն մենաստր է Եվրոպային միջինասիական գազի մատակարարման հարցում:

Հույն-իտալական գազամուղը կկառուցեն Իտալիայի երկու խոշոր էներգետիկ ընկերություն՝ «Էդիսոնը» եւ Հունաստանի «Դեպա» պետական գազային ձեռնարկությունը: Առաջին 25 տարում գազատարի կարողությունների 80 տոկոսը (8 մլրդ խմ) կտնօրինի «Էդիսոնը», 20 տոկոսը՝ «Դեպան»:

2006 թ. նոյեմբերին Եվրոհանձնաժողովն Ադրբեջանի հետ ստորագրեց հուշագիր, որով նախատեսվում է նվազեցնել Եվրոմիության կախվածությունը ռուսական գազի մատակարարումներից:

Անդրեյ Կոզլովին կփոխարինի Գենադի Մելիքյանը

Ռուսաստանի Կենտրոնական բանկի արտաքին եւ հասարակական կապերի վարչությունը տեղեկացնում է, որ փետրվարի 1-ից ԿԲ նախագահի առաջին տեղակալի պաշտոնն զբաղեցնում է Գենադի Մելիքյանը, փոխարինելով 2006 թ. սեպտեմբերի 13-ին սպանված Անդրեյ Կոզլովին:

ՊԵԿ գործակալությունը նշում է, որ 2006 թ. սեպտեմբերի 21-ին Մելիքյանը Կոզլովի փոխարեն արդեն նշանակվել էր բանկային վերահսկողության կոմիտեի նախագահի պաշտոնում:

Գենադի Մելիքյանը ծնվել է 1947 թ. նոյեմբերի 27-ին Կրասնոդարի երկրամասի Կրոպոտկին քաղաքում: 1974 թ. ավարտել է Մոսկվայի պետհամալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը, 1977 թ.՝ նույն ֆակուլտետի ասպիրանտուրան: Տնտեսագիտության թեկնածու է: 1977-1983 թթ. աշխատել է ԽՍՀՄ կառավարության աշխատանքի եւ սոցիալական հարցերի պետական կոմիտեում, 1989-1991 թթ. տնտեսական բարեփոխման պետական հանձնաժողովի բաժնի վարիչ էր, 1991 թ. մայիսից դեկտեմբեր՝ տնտեսական բարեփոխման պետական խորհրդի փոխնախագահը:

1992-1997 թթ. գլխավորել է ՌԴ աշխատանքի, ապա՝ աշխատանքի եւ սոցիալական զարգացման նախարարությունը, 1997-2003 թթ. խնայբանկի վարչության փոխնախագահն էր, 2003 թվականից՝ Ռուսաստանի բանկի փոխնախագահը: Միաժամանակ նույն բանկի տնօրենների խորհրդի անդամ է:

Իրաքում ուժի մեջ մտավ ծխելու արգելքը

Փետրվարի 1-ին Դանիայի հասարակական վայրերի մեծ մասում ուժի մեջ մտավ ծխելն արգելող օրենքը: Խոսքը ձեռնարկությունների, հիմնարկների, կրթական եւ բուժական հաստատությունների, հասարակական տրանսպորտի, խանութների, առեւտրի կենտրոնների եւ բարերների մասին է:

Բացառություն են կազմում ռեստորանները, սրճարանները, խաղասները եւ պարասրահները, որտեղ ծխելու արգելքը կգործի 2008 թ. հունվարի 1-ից:

Ծխելու արգելքը վերաբերում է մոտ 15 միլիոն ֆրանսիացիների: Եթե հաշվի առնենք նաեւ մերթ ընդ մերթ ծխողներին, նրանց թիվը կհասնի 25 միլիոնի, որ կազմում է երկրի բնակչության մոտ 40 տոկոսը:

Արգելքը խախտողներին սպառնում է 68 եվրո տուգանք, իսկ հիմնարկների ու ձեռնարկությունների կարգազանց ղեկավարները կտուգանվեն 135 եվրոյով:

Նոր օրենքի կատարման ընթացքը վերահսկում են 175 հազար պետական ծառայողներ՝ իրավապահներ, սանտեսուչներ, անվտանգության ինժեներներ եւ լիազորված այլ անձիք:

Հիվանդանոցներում, դպրոցներում, վարժարաններում ծխելու արգելքը կատարյալ է. նույնիսկ բակերում չի կարելի ծխել: Ձեռնարկություններում թույլատրվում է բացել «ծխարաններ»: Բայց ներկայացվող պահանջներն այնքան խիստ են, որ ոչ ձեռնարկատերեր կուզենան նման քայլի դիմել, նշում է Ֆրանսպրես գործակալությունը:

Ծխելու արգելքը չի տարածվում բաց կառամատույցների եւ ջերմանավերի տախտակամածների վրա: Հյուրանոցների կենսորները եւ ծերանոցների բնակիչները կարող են ծխել իրենց սենյակներում, եթե, իհարկե, հաստատությունը դա չի արգելում:

Փոքր եւ միջակ ձեռնարկությունների ընդհանուր կոնֆեդերացիան իշխանություններին խնդրել է «հանդուրժող» լինել, պնդելով, թե նոր օրենքը դժվար կլինի կիրառել փոքր ձեռնարկություններում:

Պաշտոնական վիճակագրության համաձայն, ծխելու հետ կապված հիվանդություններից Դանիայում ամեն տարի մոտ 66 հազար մարդ է մահանում:

ԱԶԳ

Մշակույթ

Հռչակավոր դաշնակահար Ֆրանսուա-Ժոյել Տիոլիեի երեւանյան մենահամերգը

«XXI-ի հեռանկարներ» երաժշտական միջազգային 8-րդ փառատոնի 2007-ի համերգաշրջանը Սոֆեն-դիարյանի անվան օպերայի եւ բալետի թատրոնում բացվեց երեկ՝ ֆրանսիացի ափսարհահոչակ դաշնակահար Ֆրանսուա-Ժոյել Տիոլիեի համերգով. ծրագրում՝ Շոպեն «Պոլոնեզներ», Գերշվին: Դաշնակահարի 2-րդ՝ «80 րոպեում ափսարհի շուրջը» համերգը տեղի կունենա «Ակումբ» սրահում՝ այսօր: Ամենատարբեր երաժշտական մշակույթ ներկայացնող համերգային այս ծրագրի նպատակն է ցույց տալ տարբեր ժողովուրդների երաժշտությանը բնորոշ առանձնահատկությունները, դրանց ընդգծված ազգային մոտիվները, ձեւերը, բնույթը՝ հակառակ արվեստը համաշխարհայնացմանը տանող ճիգերի: Ֆրանսուա-Ժոյել Տիոլիեին արտերկրի հռչակավոր երաժիշտներից առաջինն է, որ նվագեց անցած տարի օպերային թատրոնում տեղադրված սթենուեյի վրա, (բացումը 2006 թ. սեպտեմբերին կատարեց Արթուր Փափազյանը):



Հայաստանը ֆրանսիացի դաշնակահարին հարազատացել է վաղուց՝ դեռեւս 70-ականներին արդեն մեծ հռչակի տեր արտիստը Գոսկոնցերտի հրավերով մեկնում է Մոսկվա, այնուհետեւ իր ցանկությամբ այցելում մեր երկիր՝ հայ մշակույթի եւ հոգեւոր ճարտարապետության իր հեսաֆրություններից ներշնչված: Այս վերաբերմունքը նրա մեջ մինչ այդ առաջացել էր հայկական մշակութային շրջանակների հետ շփումներից, հանդիպումներից Արամ Խաչատրյանի, Առնո Բաբաջանյանի հետ. «Մեծ հարգանք ու խոնարհում ունեմ այն մարդկանց հանդեպ, որոնց հանդիպել եմ», երեկ ասաց նա «Երեւան» հյուրանոցում՝ մամլո ասուլիսին: «XXI-ի հեռանկարների» հրավերով նա մի քանի տարի առաջ Երեւանում ելույթ է ունեցել Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ: Տիոլիեն միջազգային հեղինակավոր բազում մրցույթների հաղթող է: Առաջին համերգը ունեցել է 5 տարեկանում, կատարել է դասական նվագացանկի 86 կոնցերտները՝ ափսարհի առաջատար նվագախմբերի եւ դիրիժորների հետ ամենահռչակավոր բեմահարթակներում՝ Միլանի Լա Սկալայում, Բեռլինի Ֆիլհարմոնիայում, Ելիսեյան դաշտերի թատրոնում, Մադրիդի Թեատր Ռեալում, Տոկիոյի Սաթորիում, Լայպցիգի Գեվանդհաուզում եւ այլն: Նրան բնորոշել են իբրեւ «դաշնակահարի, որը, վեր է ամեն համեմատությունից»:

«XXI-ի հեռանկարներ» փառատոնը, իր գեղարվեստական մակարդակով եւ կազմակերպությամբ հայտնի է եւ՝ Հայաստանում, եւ՝ տարածաշրջանում: Փառատոնի շրջանակներում Երեւանում համերգներով հանդես եկած արտիստների ելույթները մշակութային կարեւորագույն իրադարձություն է՝ «Տոկիո» լարային քառյակ, «Քոնոս», «Բորոդին» քառյակներ, «Վիեննայի տղաները» երգչախումբ, «Հիլիարդ» անսամբլ, Գիդոն Կրեմեր, Յուրի Բաշմետ, «Մոսկվայի մենակատարներ» եւ այլն :

Ասուլիսի ընթացքում «XXI-ի հեռանկարների» գլխավոր մենեջեր Սոնա Հովհաննիսյանը ուրախությամբ նշեց, որ փառատոնը այսուհետեւ իր գործունեության կայունությունը հնարավորություն կունենա աղահովել «Վիվասելի» աջակցությամբ:

Մ. Ռ.

Սարդոսայնի մեջ

Ընթերցողի սեղանին է դրվել նոր գիրք: Երեւանի «Նոյյան տապան», «Անի» եւ «Ավասա» գրախանութներում վաճառվում է Անդրանիկ Կարաբաջակյանի «Սարդոսայնը» գիրքը, որն ունի նաեւ ենթախորագիր՝ «Մի ընտանիքի պատմությունից»: «Այս հարցին չի կարելի նայել որպես խիստ անձնական հարցի, քանի որ 7 հոգին մի ցեղի մեջ՝ դա արդեն ազգային հարց է...», գրված է գրքի տիտղոսաթերթին: Գովազդի կանոններին համաձայն, այս բացատրությունից հետո ակնկալում ես ծանոթանալ մի հետաքրքրական պատմության: Այդպես էլ կա, բայց... ամեն ինչ՝ իր տեղում:

Մի փոքր ձեւափոխելով հանրահայտ խոսքն՝ ասենք. «Մեկ մարդու ողբերգությունը ողբերգություն է, շատերի ողբերգությունը՝ վիճակագրություն»: Անդրանիկ Կարաբաջակյանի պարագայում հայրենիքից հեռացած, օտար ափերում մի կտոր երջանկություն, չէ, ավելի հստակ՝ հոգու մի փոքր խաղաղություն որոնող մարդու պատմություն է: Դրամատիզմով լի անսովոր այս պատմությունը Հայաստանից 1988 թվականին Ամերիկայի Միացյալ Նահանգներ տեղափոխված ընտանիքի մասին է: Հեղինակը համոզված է, որ նախանձը, էգոիզմը, սադիզմը՝ ամփոփված մեկ անձի մեջ, դառնում է ամենավտանգավոր նախապայմանը մարդկության եւ բնության քայքայման, պառակտման ու բնաջնջման, որի, ըստ էության, չգիտակցված զոհերն են դառնում նաեւ նրանց աջակցողները: Այս միտքը բացատրելու, ավելի հստակեցնելու համար Անդրանիկ Կարաբաջակյանը ներկայացնում է փաստաթղթեր, նամակներ, լուսանկարներ, որոնք բացատրում են, թե ինչ է եղել իրականում եւ ինչն է մղել երիտասարդ այս մարդուն ոչ թե գիրք գրել, այլ հոգու հզոր մի ճիչ արձակել:

Դժվարությամբ ես կարդում այս գիրքը, որովհետեւ փաստերն իսկապես անողոք են: Կարծես հայտնվել ես կործանվող մի նավում, էքստրեմալ մի իրավիճակում, երբ ամեն մի սրբություն, մարդկային ամեն բան մոռացվում է: Կարաբաջակյանների ընտանիքը, առավել եւս գրի հեղինակը միշտ էլ հոգեկան հզոր տվայտանքների մեջ է եղել: Որքան դաժան բաներ պետք է ապրած եւ զգացած լինես, որ հետագայում, մանկությունդ հիշելիս, գրես. «... Մայրս խստականություն էր դնում երեխաների միջեւ եւ դա ինձ համար մնում էր անբացատրելի, որովհետեւ պատիժների մեջ ոչ թե մեղքն էր դեր խաղում, այլ մորս բնույթը: Նա ինձ ծեծելիս վերաբերվում էր դաժանորեն, ասես ինձանով ինչ-որ մեկից վրեժ էր լուծում: Ասես ես եւ թիրախ լինեի, եւ աղաստարան: Իր մեջ թաքցրած ատելությունը, դժգոհությունը եւ հակասությունները այս կյանքի հետ նա փորձում էր տարալուծել ու կորցնել ի ծնե ինձ հատուկ համբերության եւ սիրո մեջ: Մյուս եղբայրներիս նկատմամբ չեմ հիշում, որ դաժան վերաբերմունք ունենար կամ ծեծած լիներ... »:

Չգիտեմ, թե այսպիսի մանկություն ունեցող մարդը հետագայում ինչպիսի կյանք պիտի ունենար, ինչպես պիտի գտներ հոգու հանգստություն: Պիտի որ անեծք իջած լինի այս ընտանիքի անդամների վրա: Անդրանիկի հիշատակած շատ դեպքերից մեկը հիշենք...

1988 թ. սեպտեմբերին, երբ Կարաբաջակյան ընտանիքը Ամերիկա էր թռչում, Նյու Յորքի օդանավակայանում վատանում է ընտանիքի հայրը՝ Սինասը: Նրան մի շիշ ջուր է պետք լինում: Սակայն նրա Հարութ որդին, որի մոտ էր գտնվում ընտանիքի ողջ փողը, հորն ասում է. «Եթե որոշես, որ սրանից հետո ինձ ես ենթարկվելու եւ իմ խոսքը քո համար օրենք է լինելու, ջուր կառնեմ՝ կխմես, եթե ոչ, ջուր չես տեսնի»:

Հիմա երբեմն այնպիսի գրքեր են տպագրվում, նաեւ անձնական, ընտանեկան, հարազատական կապերի մասին, որոնք կարդալիս արյունդ ջուր է դառնում: Մարդկային հարաբերությունները, հատկապես հարազատների միջեւ ստեղծված կապերը, պարզապես խախտել են բարոյականության ամեն մի նորմ: Այսպիսի մի պատմություն է նաեւ Անդրանիկ Կարաբաջակյանի «Սարդոսայնը» գիրքը: Իսկապես, մեծ համարձակություն է պետք այսպիսի գրքեր գրելու եւ տպագրելու համար: Եվ եթե միայն առաջին հայացքից է այս պատմությունը խիստ անձնական թվում, ապա ուշադիր կարդալու դեպքում (իսկ այս գիրքը դժվարությամբ է կարդացվում ներկայացված փաստերի անողոքության պատճառով) ընթերցողը կտեսնի այն դաժան ափսարհը, որը սարդոսայնի պես պատել է մեզ: Մի ընտանիք, հայ ժողովրդի մի բջիջ, որոշել է բախտ որոնել այդքան գովերգված «հրաշք» երկրում՝ Միացյալ Նահանգներում: Բայց ինչպես միշտ, պարզվում է, որ այս ընտանիքը եւս օտար է ուրիշ ափսարհի հսկա խնջույքին:

Հեսաֆրությունքներ, ինչ-որ տեղ նաեւ ուսուցողական գիրք է ստեղծել Անդրանիկ Կարաբաջակյանը: Բայց ափսոս, որ խմբագրական ափսասանք է անկասկած:

Ամեն դեպքում ասենք, որ ճանաչողական կարեւոր գիրք է տպագրվել:

ՄԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ

Հանդիպում հեղինակի հետ

Մշակույթի հայկական ֆոնդում երեկ հանդիպում էր գրող, «Ազգ» թերթի ափսասակից Սերգեյ Գալոյանի հետ, որի առիթը ոչ միայն հեղինակի վերջերս հրատարակված «Հրամայված է սպանել-2» գիրքն էր, այլեւ արդեն պատրաստ, բայց դեռեւս անտիպ գիրքը, որը միայն պայմանական անուն ունի՝ «Պարույր Սեւակ. Զուտ սովետական սպանություն»: Այս գրքում նոր փաստեր են բացահայտվում, հայտնի փաստերի նոր մեկնաբանություններ են տրվում: Հեղինակը նշեց, որ գրքի մեկ տարբերակի, դասական հայերենով տեքստի համար իր համաձայնությունն է տվել սփյուռքահայ մեր ճանաչված հրատարակիչներից եւ բարերարներից մեկը: Իսկ ժամանակակից հայերենով գրքի տպագրության շուրջը բանակցություններ են վարվում:

Հանդիպման ժամանակ խոսակցություն բացվեց Պարույր Սեւակի ժամանակներում տիրող գրական դաժան մթնոլորտի մասին, որի շոշափուկները հասնում են մինչեւ մեր օրերը: Գիրքը փաստագրական հարուստ նյութ է պարունակում, երեւում են մարդիկ, ոմանք՝ իրենց շռայլությամբ ու պայծառությամբ, մյուսներն իրենց թշվառությամբ: Ինչպես նշեցին մշակույթի հայկական ֆոնդի հերթական հանդիպման մասնակիցները, այս նոր գիրքը կընթերցվի մեծ հետաքրքրությամբ:

ՀԱՅԵՆՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ավելի լավ է ընդհատակում լինել, քան հայկական շոուբիզնեսում

«Բամբիռ» ռոք խմբի տղաներն ամեն ուրբաթ երգում են «Ուրբաթ» ակումբում: Արդեն երկար ժամանակ նրանց անունը չի հնչում հեռուստաեթերից, տեսահոլովակները չեն ցուցադրվում, ինչպես իրենք են ասում՝ «ընդհատակ են անցել», որովհետեւ չեն ուզում լինել հայկական շոուբիզնեսում, որը լցված է երգի պետական թատրոնի նույն դեմքերով ու նույնատիպ երգերով: Իրենք շարունակում են իրենց հայրերի երաժշտական ոճը, որը մասնագետներն անվանում են ֆոլկլորային՝ դասականի եւ ժողովրդականի զուգորդմամբ: Նրանց խիստ յուրատիպ ոճը ընդգծված տարբերվում է հայաստանյան մյուս խմբերից: Դրա համար 2004 թվականի ազգային երաժշտական մրցանակաբաշխությունում նրանք ճանաչվեցին տարվա լավագույն ռոք խումբը:

Հիմա իրենք հիմնականում նվագում են ակումբներում, ինչպես արդեն նշեցինք, «Ուրբաթ» ակումբում, որտեղ երեկ ասուլիս էին հրավիրել՝ խոսելու իրենց համար այսօր անչափ կարեւոր հարցի՝ Արեւմուտքում եւ Հայաստանում ռոք մշակույթի ընկալման տարբերության մասին: «Մեզ մոտ ռոքն անլուրջ, սատանիստական բան են համարում նույնիսկ ռոք լսողները: Դա անհեթեթություն է: Եվրոպայում բոլորովին այլ մոտեցում է, օրինակ, Մեծ Բրիտանիայում հասարակությունը «Բիթլզ» է լսում, որովհետեւ մարդկանց դա է մատուցվել: Իսկ Հայաստանը դարձավ անկախ պետություն, որտեղ պետք է ստեղծվեին իսկական արժեքներ, սակայն փոխարենը ասպարեզ եկան ինչ-որ անհեթեթություններ ու ձեւավորվեց մշակութային դիկտատուրա: Կարծում ենք, դա պետք է վերացվի: Մենք այստեղ ճանաչվելու խնդիր չունենք, մեր հիմնական նպատակը լավ երաժշտություն մատուցելով հասարակության պահանջները բարձրացնելն է», ասաց Նարեկ Բարսեղյանը:

Անցած տարի իրենք համերգների են մեկնել Մ. Նահանգներ, որտեղ «System of a down» հայտնի ռոք խմբի երաժիշտները նրանց ծանոթացրել են մի շարք պրոդյուսերների, մենեջերների հետ: «Մենք նվագում էինք ոչ միայն հայերի մոտ, այլեւ ամերիկյան ակումբներում: Օտարներն ասում էին, որ մեր ռոքը շատ յուրահատուկ է, հեթանոսական, անսովոր ու նոր իրենց ականջին: Բայց մենք չուզեցինք այնտեղ մնալ, որոշեցինք Հայաստան գալ ու ինչ-որ բան անել: Մեր օրերի մասին գրված հայերեն շատ երգեր ունենք, որ ուզում ենք այստեղ երգել եւ ինչ-որ բան փոխել: Խնդիրն այն չէ, որ մեզ այստեղ լիչ են լսում, այլ այն, թե ինչո՞ւ են մեր երկրում երաժշտական արժեքները սխալ ընկալվում: Մեր երգերն այստեղ սիրում են, բայց մեզ համար խնդիրը մեզ սիրել-չսիրելը չէ, այլ երաժշտական բարձր արժեքներ տարածելը»:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Իրանը տոնում է հեղափոխության 28-ամյակը

Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) դեսպանատունը եւ մշակույթի կենտրոնը մի քանի ավանդույթ է ձեւավորել վերջին տարիներին: Յուրաքանչյուր տարվա փետրվարի սկզբին, ի թիվս ափսարհի շատ երկրների, Հայաստանում եւս ԻԻՀ դեսպանատան եւ մշակույթի կենտրոնի նախաձեռնությամբ նշվում է Իրանի իսլամական հեղափոխության տարեդարձը՝ այդ կերպ հնարավորություն ընձեռելով նաեւ մեզ դառնալու հարեւան երկրի համար այդչափ կարեւոր եւ լուսավոր իրադարձության մասնակիցը:

Այս տարի նշվում է Իրանի իսլամական հեղափոխության 28-րդ տարեդարձը, որի առիթով փետրվարի 1-10 Հայաստանում եւ ափսարհի 50 երկրներում մեծարման տասնօրյակ է: Ուղիղ 28 տարի առաջ Իմամ Խոմեյնու առաջնորդությամբ Իրանի ժողովուրդը իրականացրեց մեծ հեղափոխություն, որն ավարտվեց իսլամական կարգերի հաստատման հաղթանակով: Երեկ մեծարման տասնօրյակի առաջին միջոցառումը բացվեց ժողովրդական արվեստի թանգարանում, որտեղ ներկայացվեցին հեղափոխության գործընթացը պատկերող լուսանկարներ, գեղանկարիչ Ամիր Հուսեյն Աղամիրի մանրանկարները: Միջոցառմանը մասնակցում էին մշակութայիններ, մի քանի պատգամավորներ, մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարար Հասմիկ Պողոսյանը, Հայաստանում Լիբանանի դեսպան Ժեբայիլ Ժեարան:

Հայաստանում ԻԻՀ դեսպանատան մշակույթի կենտրոնի կցորդ Ռեզա Աբուֆին, ներկայացնելով իրանցի ժողովրդի համար հեղափոխության ունեցած արժեքը, ընդգծեց, որ իրանցի ժողովուրդը պահում-պահպանում է հեղափոխության ձեռքբերումները: Նա նաեւ ավելացրեց, որ հեղափոխության հաղթանակում մեծ ներդրում են ունեցել իրենց երկրում ապրող ազգային փոքրամասնությունները՝ հատկապես հայերը: Հայաստանի մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարար Հասմիկ Պողոսյանը հեղափոխության տարեդարձի նշումը մեր երկրում եւս մեկ առիթ համարեց արժեւորելու հայ-իրանական դարավոր մշակութային կապերը, մտորելու դրանց զարգացման եւ վաղվա ապագայի շուրջը:

Հայաստանում ԻԻՀ դեսպան Ալիռեզա Հաղիղյանը նույնպես անդրադարձավ հեղափոխության պատմությանն ու արժեքին. «Հեղափոխության հաղթանակը հաղթանակ էր Իրանի ժողովրդի բոլոր խավերի համար»: Խոսելով հայ-իրանական բարեկամության մասին՝ դեսպան Հաղիղյանը նշեց, որ երկկողմ հարաբերությունները բոլոր ոլորտներում բարձր մակարդակի վրա են:

ԳՈՌԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱԶԳ **Մարզական**

Առաջնության մասնակիցների թվախնակի հարցում առայժմ անորոշություն է

«Բանանցը» մեկնեց Կիպրոս

Հայաստանում ֆուտբոլային մրցաշրջանի մեկնարկին այնքան էլ շատ ժամանակ չի մնացել, սակայն դեռևս անորոշություն է որոշ հարցերում: Բանն այն է, որ առայժմ հայտնի չէ, թե քանի՞ թիմ է մասնակցելու ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնությանը: Ճիշտ է, 2007 թ. առաջնության անցկացման մրցակարգով նախատեսվում է բարձրագույն խմբի մրցաշարն անցկացնել 9 թիմով երեք կամ չորս շրջանով: Սակայն առայսօր այդ թիմերից երկուսը՝ «Ուլիսն» ու «Լեռնային Արցախը» դեռ չեն նախադատարկվում նոր մրցաշրջանին: Այդ թիմերի ճակատագիրն առայժմ անորոշ է: Նման պայմաններում, իհարկե, ֆուտբոլի ֆեդերացիան էլ առայժմ հնարավորություն չունի հստակ որոշելու Հայաստանի գավաթի եւ առաջնության մեկնարկի ժամկետները, կազմելու խաղացանկը:

Նման իրավիճակը նորություն չէ եւ տարեցտարի պատկերը կրկնվում է: Հիշենք թեկուզ անցյալ մրցաշրջանը, երբ մինչեւ առաջնության մեկնարկը այդպես էլ անորոշ էր «Էսթեղլալ-Կոտայքի» եւ «Դինամո-Զենիթի» ճակատագիրը: Ի վերջո, ֆինանսական միջոցների բացակայության հետեւանքով երկու ակումբներն էլ լուծարվեցին, իսկ հիմնադրված նոր թիմը՝ «Ուլիսը» շատ ուշ սկսեց նախապատրաստությունը, ինչն ի վերջո անդրադարձավ թիմի՝ մրցելույթների վրա: «Ուլիսն» անհաջող ելույթ ունեցավ անցած առաջնությունում՝ միայն անցումային խաղում «Դիամոյին» հաղթելու շնորհիվ պահպանելով տեղը բարձրագույն խմբում:

Ճիշտ է, այժմ ականատես ենք նաեւ հակառակ երեւույթին: Մեկամյա դադարից հետո կրկին վերակազմավորվել է «Երեւան յունայթեդը» եւ թիմը Ալբերտ Սարգսյանի գլխավորությամբ սկսել է մարզումները՝ մեծ թվով ֆուտբոլիստներ փորձարկելով պարապմունքներում: Ուրախալի է նաեւ, որ վերջապես ֆինանսական ճգնաժամից դուրս է գալիս Գյումրու «Շիրակը», որը լուրջ մտադրություններով է մրցաշրջան դուրս գալու: Թիմ են վերադարձել գյումրեցի մի քանի փորձառու ֆուտբոլիստներ, որոնք անշուշտ կամրապնդեն «Շիրակի» կազմը:

Դե իսկ վերջին տարիների մեր առաջատար թիմերը, որոնք ֆինանսապես բավական կայուն են, նոր մրցաշրջանի նախապատրաստությունն անցկացնում են նաեւ արտերկրում: Մասնավորապես երկրի փոխչեմպիոն «Բանանցը» երեկ առավոտյան մեկնեց Կիպրոս՝ ուսումնամարզական առաջին հավաքի: Ինչպես արդեն տեղեկացրել ենք, թիմի առանցքային ֆուտբոլիստ Արամ Հակոբյանն այս օրերին փորձաշրջան է անցնում ուկրաինական «Իլիչեւեցում»: Փորձաշրջանի է մեկնել նաեւ պաշտպան Անդրեյ Ցերեւկոն: Իսկ ահա Եղիշե Մելիքյանը, որ վերջին տարիներին հանդես էր գալիս Ուկրաինայում, կրկին վերադառնում է «Բանանց»: Կիպրոսում «Բանանցը» սուգողական հանդիպումներ կանցկացնի՝ վերջնականապես կողմնորոշվելու ֆուտբոլիստների հարցում: Նշենք, որ թիմն արդեն հրաժարվել է արգենտինացի Մարկոս Ագիրեից, որը փորձաշրջան էր անցնում:

Հունվարի 28-ին Սոչի պետք է մեկներ «Միկան», սակայն լեգեոնականների մուտքի վիզայի ձեւակերպման խնդիրների պատճառով ուղեւորությունը մեկ շաբաթով հետաձգվել է: Մոտ օրերս թիմը ուսումնամարզական հավաքի կմեկնի: Կուտկի «Ավանգարդում» փորձաշրջան անցնելուց հետո Երեւան է վերադարձել դարպասպահ Ֆելիքս Հակոբյանը, որը հնարավոր է տեղափոխվի «Գանձասար»:

Ծաղկաձորում մարզումներն ավարտելուց հետո Երեւանում է շարունակում պարապմունքները երկրի չեմպիոն «Փյունիկը»: Չեմպիոնն այս տարի էլ հիմնական շեշտը դրել է սեփական մարզադպրոցի սաների վրա եւ թիմի համալրումը կատարում է նրանց հաշվին: Նախապատրաստական այս շրջանում թիմը որոշ կորուստներ է կրել: Հիմնական դարպասպահ Գետրգ Կասպարովը երկու տարվա պայմանագիր է կնքել Իրանի «Պաս» ակումբի հետ: Մինչեւ մայիս Իրանի «Շիրազում» հանդես կգան «Փյունիկի» փորձառու ֆուտբոլիստներ Աղվան Մկրտչյանն ու Ալեքսանդր Թադեւոսյանը: Ինչ խոսք, այս ֆուտբոլիստների բացակայությունը լուրջ կորուստ կլինի «Փյունիկի» համար:

Նոր մրցաշրջանին լրջորեն են նախապատրաստվում նաեւ Երեւանի «Արարատի» ֆուտբոլիստները, որոնք եւս ուսումնամարզական հավաքներ պետք է անցկացնեն արտերկրներում: Թիմը բավական լավ համալրում է ստացել եւ Վարուժան Սուքիասյանի գլխավորությամբ ընթացիկ առաջնությունում լուրջ խնդիրներ է հետապնդելու: Ընդհանրապես դատելով թիմերի նախապատրաստական աշխատանքների ընթացքից, կազմերի համալրման գործընթացից, բավական հետաքրքիր մրցապայքար է սպասում առաջնության պարգեւների համար: Մնում է, որ մյուս թիմերի ճակատագրի անորոշությունը պարզվի, հստակեցվի առաջնության մասնակիցների թիվն ու մեկնարկի ժամկետները:

2008 թ. Կանը կավարտի ելույթները

Մյունխենի «Բավարիայի» դարպասպահ Օլիվեր Կանը մտադիր է 2008 թ. ամռանը հրաժեշտ տալ ֆուտբոլին, երբ կլրանա նրա պայմանագրի ժամկետն ակումբի հետ: Անցած տարվա հուլիսին ֆուտբոլի աշխարհի առաջնության ավարտից հետո Կանը հեռացավ ազգային հավաքականից, որի կազմում վերջին՝ 86-րդ հանդիպումն անցկացրեց 3-րդ տեղի համար մրցախաղում: «Մինչեւ 2008 թ. կկատարեմ պարտականություններս, իսկ 39 տարեկանում մտադիր եմ խաղակոշիկներս «մեխից կախել»: Կարծում եմ՝ ժամանակն է հրաժեշտ տալ ֆուտբոլին եւ ուրիշ գործով զբաղվել», հայտարարել է անվանի դարպասպահը:

Օլիվեր Կանն արդեն 12 տարի հաջողությամբ պաշտպանում է Մյունխենի «Բավարիայի» դարպասը: Նա «Բավարիա» էր տեղափոխվել «Կառլսրուհեից»: Մինչեւ ֆուտբոլին հրաժեշտ տալը Կանը մտադիր է ավելացնել իր պարգեւների առանց այն էլ հարուստ հավաքածուն: Նա 7 անգամ արժանացել է Գերմանիայի չեմպիոնի տիտղոսին, հինգ անգամ դարձել երկրի գավաթակիր: «Բավարիայի» կազմում դարպասպահը դարձել է 1995/96 թթ. ՈՒԵՖԱ-ի եւ 2000/01 թթ. Չեմպիոնների լիգայի գավաթակիր: Ընդ որում՝ Չեմպիոնների լիգայի եզրափակիչում Կանը հեսխաղյա 11մ հարվածաշարի ժամանակ հետ է մղել «Վալենսիայի» երեք ֆուտբոլիստի հարվածները՝ մեծապես նպաստելով թիմի հաջողությանը: Անվանի դարպասպահը «Բավարիայի» կազմում մասնակցել է 500-ից ավելի հանդիպումների:

Սլովենացի լողորդի նոր մտահղացումը

Սլովենացի լողորդ Մարտին Ուսրելը մտադիր է լողալով անցնել Հարավային Ամերիկայի ամենախոշոր գետը՝ Ամազոնը: Յուրօրինակ լողաշերթը նա պետք է սկսեր երեկ Պերուից եւ ավարտեր ապրիլի 11-ին Բրազիլիայում: 70 օրվա ընթացքում Ուսրելը պետք է հաղթահարի 430 կմ:

Սա սլովենացի լողորդի նմանօրինակ առաջին «սխրագործությունը» չէ: Նրա ազգանունն արդեն 3 անգամ գրանցվել է Գինեսի ռեկորդների գրքում Դունայ, Միսիսիպի եւ Յանցզի գետերը հաղթահարելու համար:

Մրցանակը գտավ տիրոջը

Ֆրանսիայում 16-րդ անգամ անցկացվեց «Ոսկե սառցահատ» հեղինակավոր մրցանակի մրցանակաբաշխությունը: Ժյուրիի որոշմամբ մրցանակը հանձնվեց Մարկո Պրեցելին եւ Բորիս Լորենչիչին (Սլովենիա), որոնք առաջինն էին հաղթահարել Տիբեթի լեռնաշղթայի Չոմո Լխարի գագաթը (7326 մետր):

ՇԱԽՄԱՏ

Հակոբյանը ստանձնեց առաջատարի դերը

Ձիբրալթարի շախմատի մրցաշրջանում պարզապես հրաշալի է խաղում երեւանցի գրոսմայստեր Վլադիմիր Հակոբյանը: Մրցաշարի նախավերջին՝ 8-րդ տուրում նա մրցում էր առաջատարի՝ Իվան Սոկոլովի հետ: Հակոբյանը մրցակցից հետ էր մնում կես միավորով եւ հաղթանակի դեպքում կարող էր շրջանցել նրան ու գլխավորել մրցաշարային աղյուսակը: Ի պատիվ իրեն, Հակոբյանը վերելքով անցկացրեց նաեւ այդ պարտիան եւ սպիտակներով անչափ կարեւոր հաղթանակ տարավ: Վերջին տուրից առաջ հայ գրոսմայստերը վաստակել է 6,5 միավոր եւ 3տրի Կուզուբովի հետ գլխավորում է աղյուսակը: Հետաքրքրական է, որ վերջին տուրում նրանք հանդիպելու են միմյանց հետ եւ հենց այդ մրցախաղի ելքն էլ կարող է որոշել մրցաշարի հաղթողին: Վճռորոշ այդ պարտիայում Հակոբյանը խաղալու է սպիտակ խաղաքարերով:

12 շախմատիստ վաստակել է 6 միավոր եւ կրնկակոխ հետապնդում է առաջատարներին: Նրանց թվում է մրցաշարի մասնակիցներից ամենաբարձր վարկանիշն ունեցող Մայքլ Ադամսը (2735), որը սեւերով ոչ-ոքի խաղաց Միխայել Գուրեւիչի հետ: Հաշտություն կնքեցին նաեւ 6-ական միավոր վաստակած Եֆիմենկոն ու Նակամուրան, Արեշչենկոն ու Սուտովսկին: Կուզուբովը հաղթեց Միլովին, Գեորգիեւը պարտության մատնեց Ռամեշին:

Մասկաեւի մրցակիցը գուցե որոշվի դատարանում

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, WBC-ի վարկածով գերծանր քաշային կարգում աշխարհի նախկին չեմպիոն Վիտալի Կլիչկոն վերադարձել է բոնցքամարտ: Նա կռուի է աշխարհի պատվավոր չեմպիոնի տիտղոսը, ինչն ըստ ընդունված կարգի Կլիչկոյին իրավունք է տալիս անմիջականորեն մարտահրավեր նետել աշխարհի ներկայիս չեմպիոն Օլեգ Մասկաեւին: Սակայն մյուս կողմից, Մասկաեւի հետ աշխարհի չեմպիոնի տիտղոսը վիճարկելու իրավունք ունի նաեւ չեմպիոնական գոտու հավակնորդ Սեմյուել Պիտերը:

Ստեղծված իրավիճակից ելք գտնելու համար WBC-ի նախագահ Խոսե Սուկեյմանն առաջարկել է Վիտալի Կլիչկոյի, Օլեգ Մասկաեւի եւ Սեմյուել Պիտերի ներկայացուցիչներին հանդիպել ու անկախ միջնորդների ներկայությամբ բանակցել մրցամարտերի կազմակերպման շուրջը: Այդ բանակցությունների ընթացքում կողմերը պետք է որոշեն, թե հավակնորդներից ո՞վ է առաջինը մենամարտելու Օլեգ Մասկաեւի հետ: Նախատեսվում է բանակցություններն անցկացնել Մեխիկոյում:

Մասկաեւի ներկայացուցիչները ցանկանում են մենամարտ կազմակերպել Կլիչկոյի հետ: Իսկ ահա Սեմյուել Պիտերի ներկայացուցիչների համոզմամբ առաջինը Պիտերը պետք է մենամարտի Մասկաեւի հետ: Այնպես որ բացառված չէ, որ համաձայնությունը չկայանա: Այդ դեպքում Օլեգ Մասկաեւի առաջիկա մրցակցին կորոշի Լոզանի մարզական վճռաբեկ դատարանը, որի վճիռը վերջնական է եւ պարտադիր կատարման համար:

Ռոնալդոյի հարցով համաձայնությունը կայացավ

Բրազիլացի հարձակվող Ռոնալդոն պաշտոնապես տեղափոխվեց իտալական «Միլան», որի հետ մինչեւ 2008 թ. հունիսը պայմանագիր է կնքել: Նա իտալական ակումբում հանդես կգա 99 համարի մարզաշապիկով: Վերջին մի քանի օրերին «Ռեալն» ու «Միլանը» բանակցում էին Ռոնալդոյի տրանսֆերային գումարի շուրջը եւ ի վերջո կարողացան ընդհանուր հայտարարի գալ:Սկզբում «Միլանը» Ռոնալդոյի համար 7 մլն եվրո էր առաջարկում, իսկ «Ռեալը» համաձայն էր բրազիլացուն տրամադրել 8 մլն եվրոյով: Բանակցությունների արդյունքում ակումբներին հաջողվեց կոմպրոմիս կնքել: «Միլանը» «Ռեալին» 7,5 մլն եվրո կվճարի, իսկ մնացած 500 հազար եվրոն արքայական ակումբը կստանա միայն այն դեպքում, եթե իտալացիներն առաջիկա երկու տարիներին Չեմպիոնների լիգայի ուղեգիր նվաճեն:

Ավելացնենք նաեւ, որ «Միլանը» «Ռեալին» վարձավճարով տրամադրել է բրազիլացի Ռիկարդու Օլիվեյրային: Վերջինս «Միլան» էր տեղափոխվել իսպանական «Բետիսից» այս մրցաշրջանի սկզբում:

Ջերարդը վճռել է ամուսնանալ

«Լիվերպուլի» եւ Անգլիայի հավաքականի կիսապաշտպան Սթիվեն Ջերարդը վերջապես որոշել է վավերացնել ամուսնական հարաբերություններն իր երկու դուստրերի մոր՝ մոդել Ալեքս Կուրանի հետ: Ամուսնության հանդիսավոր արարողությունը, որի անցկացման վայրն առայժմ գաղտնի է պահվում, կկայանա հունիսի 16-ին: Ամուսնական զույգն արդեն 1 մլն ֆունտ ստեռլինգով ամսագրերից մեկին է վաճառել պսակադրության արարողությունը լուսանկարելու իրավունքը:

Ջերարդն ու Կուրանն արդեն կազմել են հյուրերի ցանկը, որոնց թվում են Ուեյն Ռունին Կոլին Մակլաֆլինի հետ, Գարի Բաուլոուն, Էշլի Քոուլն իր հարսնացուի՝ Շերիլ Թվիդի հետ, Մայքլ Օուենն ու կինը՝ Լուիզան եւ իհարկե, «Լիվերպուլի» բոլոր ֆուտբոլիստներն իրենց կանանց եւ սիրեցյալների հետ: Հանդիսավոր արարողության սցենարը, որը գաղտնի է պահվում, հանձնարարվել է նման միջոցառումների կազմակերպմամբ զբաղվող մի ընկերության:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ՅՈՒՆԻԲԱՆԿՆ առաջարկում է վարկեր HYUNDAI

մակնիշի ավտոմեքենաների ադառիկ վաճառքի համար իր բոլոր մասնաճյուղերում

Հայաստանում «Հյունդայ» ավտոմեքենաների ուղղակի ներկրող եւ միակ դիստրիբյուտոր՝
«ՄԱԳԱՍ Ինվեստ» ՓԲԸ, Դիլեր՝ **«ՄԱԳԱՍ Մոթորս» ՍՊԸ**

Պայմաններ՝ «Հյունդայ»-ի բոլոր մոդելների համար

Կանխավճար՝ **15 %**-ի չափով

Մարման ժամկետ՝ **6 տարի**

Տոկոսադրույք՝ **16 %**

«ՄԱԳԱՍ ՄՈԹՈՐՍ»

հասցե՝ Աճառյան 60 հեռ/ֆաքս՝ (374-10) 581607 բջջ.՝ 091-419238, 093-659004
e-mail: magas@arminco.com

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է բաց մրցույթ՝ Ֆինանսական համակարգի խաղաղականության ու վերլուծությունների վարչության Ֆինանսական համակարգի վերլուծությունների բաժնի «Բանկային վերլուծաբան» երկու թափուր աշխատատեղերի համալրման համար.

«Բանկային վերլուծաբան» 1

Աշխատանքի նպատակն է.

ՀՀ ֆինանսական համակարգի (բանկեր, վարկային կազմակերպություններ, գրավատներ, արժեթղթերի շուկա) գործունեության ու զարգացման ուղղությունների վերլուծություն եւ գնահատում, ռիսկերի գնահատման նոր մոտեցումների մշակում:

Աշխատատեղի հիմնական պարտականություններն են.

Իրականացնում է թեմատիկ եւ պարբերական վերլուծություններ ֆինանսական հատվածի կամ նրա առանձին տարրերի զարգացումների վերաբերյալ :

Իրականացնում է ֆինանսական կայունության գնահատման վերլուծություններ, ստորաբաժանումների միջեւ աշխատանքների կոորդինացում եւ ֆինանսական կայունության հաշվետվության մշակման կազմակերպում:

Իրականացնում է արժեթղթերի շուկայում տեղ գտած զարգացումների եւ արժեթղթերի շուկայում մասնագիտացված անձանց գործունեության վերլուծություն:

Պահանջվող կրթությունը եւ գիտելիքների շրջանակը

Բարձրագույն տնտեսագիտական կրթության պարագայում՝ 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ

Բարձրագույն ոչ մասնագիտական կրթության պարագայում՝ 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ

Գիտելիքներ հետեւյալ ոլորտներում՝ բանկային գործ (խորացված), ֆինանսներ եւ ֆին. անալիզ (խորացված), բանկային օրենսդրական եւ նորմատիվային դաշտի տիրապետում (խորացված), ռիսկերի կառավարում (խորացված), ապահովագրություն եւ արժեթղթերի շուկա (միջանկյալ), հաշվապահական հաշվառում (միջանկյալ), մակրո եւ միկրոէկոնոմիկա (միջանկյալ), դրամավարկային եւ բանկային վիճակագրություն (միջանկյալ), էկոնոմետրիկա (ներածական), վիճակագրություն հիմունքներ (միջանկյալ):

Լեզուների իմացությունը՝ հայերեն եւ ռուսերեն լեզուների ազատ տիրապետում, անգլերեն լեզվի լավ իմացություն (մասնագիտական գրականություն ընթերցելու, առօրյա եւ մասնագիտական շփման համար):

Անհրաժեշտ հմտությունները՝ Համակարգչով աշխատելու հմտություն (MS Office), տվյալների շտեմարանների հետ աշխատելու ունակություն

«Բանկային վերլուծաբան» 2

Աշխատանքի նպատակն է.

ՀՀ ֆինանսական համակարգի (բանկեր, վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ, գրավատներ, արժեթղթերի շուկա) գործունեության ու զարգացման ուղղությունների վերլուծություն եւ գնահատում, ռիսկերի գնահատման նոր մոտեցումների մշակում: Բազել II համաձայնագրի ներդրման աշխատանքների կոորդինացում:

Աշխատատեղի հիմնական պարտականություններն են.

Իրականացնում է թեմատիկ եւ պարբերական վերլուծություններ ֆինանսական հատվածի կամ նրա առանձին տարրերի զարգացումների վերաբերյալ՝ հիմք ընդունելով հաշվետու կազմակերպություններից ստացվող պարբերական հաշվետվությունները եւ հարցումների արդյունքում ստացված տվյալները:

Իրականացնում է Բազել II համաձայնագրի ներդրման հետ կապված աշխատանքների կազմակերպում եւ կոորդինացում:

Իրականացնում է արժեթղթերի շուկայում տեղ գտած զարգացումների եւ արժեթղթերի շուկայում մասնագիտացված անձանց գործունեության վերլուծություն:

Պահանջվող կրթությունը եւ գիտելիքների շրջանակը

Բարձրագույն տնտեսագիտական կրթության պարագայում՝ 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ

Բարձրագույն ոչ մասնագիտական կրթության պարագայում՝ 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ

Գիտելիքներ հետեւյալ ոլորտներում՝ բանկային գործ (խորացված), ֆինանսներ եւ ֆին. անալիզ (խորացված), բանկային օրենսդրական եւ նորմատիվային դաշտի տիրապետում (խորացված), ռիսկերի կառավարում (խորացված), Մաթ. վիճակագրություն (խորացված), ապահովագրություն եւ արժեթղթերի շուկա (միջանկյալ), հաշվապահական հաշվառում (միջանկյալ), մակրո եւ միկրոէկոնոմիկա (միջանկյալ), դրամավարկային եւ բանկային վիճակագրություն (միջանկյալ), էկոնոմետրիկա (ներածական), վիճակագրություն հիմունքներ (միջանկյալ):

Լեզուների իմացությունը՝ հայերեն եւ ռուսերեն լեզուների ազատ տիրապետում, անգլերեն լեզվի լավ իմացություն (մասնագիտական գրականություն ընթերցելու, առօրյա եւ մասնագիտական շփման համար):

Անհրաժեշտ հմտությունները՝ համակարգչով աշխատելու հմտություն (MS Office), տվյալների շտեմարանների հետ աշխատելու ունակություն:

Աշխատավարձը. Աշխատակիցներին տրվում է ՀՀ շուկայում մրցունակ աշխատավարձ (249 500 դրամից):

Փաստաթղթերի ընդունելության վերջնաժամկետը՝ 26 փետրվարի 2007թ.

Պահանջվող փաստաթղթերը.

- դիմումի ձեւ (ձեւը զետեղված է ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում - www. cba. am /«Մեր մասին»/«Թափուր աշխատատեղեր» բաժնում, կամ տրվում է ՀՀ կենտրոնական բանկում)
- անձնագիր, անձնագրի պատճեն
- սոցիալական ապահովության քարտ, սոցիալական ապահովության քարտի պատճեն
- դիպլոմ, դիպլոմի միջուկ, դիպլոմի եւ դիպլոմի միջուկի պատճեններ
- զինգրքույկ, զինգրքույկի պատճեն (արական սեռի ներկայացուցիչների համար)
- աշխատանքային գրքույկի պատճեն
- երկու գունավոր լուսանկար, 3x4 չափսի

Մրցութային հարցաշարը եւ ՀՀ կենտրոնական բանկում մրցույթների անցկացման վերաբերյալ տեղեկատվությունը զետեղված է ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում (www. cba. am) կամ տրվում է Կենտրոնական բանկում:

Պարզաբանումների համար կարող եք զանգահարել՝ 56-14-40 եւ 06-34 (ներքին)

ԿԲ մամուլի ծառայություն

Մահախոսական



2007 թվականի հունվարի 31-ին կյանքից հեռացավ Հայաստանի Հանրապետության ժողովրդական դերասան, Սլովակիայի մշակույթի վաստակավոր գործիչ, Խ. Աբովյանի անվան Հայկական թեատրոնական մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի պարարվեստի ամբիոնի պրոֆեսոր, հայ դասական պարարվեստի մեծ եռախտավոր, Հայաստանի ազգային պարարվեստի միության վարչության անդամ Ֆրունզե Մեխակի Ելանյանը:

Ֆրունզե Ելանյանը ծնվել էր 1928 թ. փետրվարի 22-ին, Երեւանում:

1944 թ. մինչեւ 1970 թվականը եղել է Ազգային օպերայի եւ բալետի թատրոնի բալետի մենակատար-արտիստ: Տաղանդավոր արտիստը կերտել է անզուգական դերարարքեր՝ Ջիգֆրիդ՝ «Կարապի լիճը», Ժան դե Բրիեն՝ «Ռայմոնդա», Դավիթ՝ «Խանդութ», Ալբերտ՝ «Ժիզել», Բազիլ՝ «Դոն Քիխոտ», Հարմոդի՝ «Սպարտակ» եւ այլ բալետային ներկայացումներում:

1966-76 թվականներին դասավանդել է Երեւանի պարարվեստի ուսումնարանում:

1978-ից մինչեւ 2002 թվականը ղեկավարել է Խ. Աբովյանի անվան Հայկական թեատրոնական մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի պարարվեստի ամբիոնը:

Որպես բեմադրիչ-խորեոգրաֆ բեմադրել է Չայկովսկու «Կարապի լիճը», Ա. Խաչատրյանի «Գայանե», Ռավելի «Բոլերո», Պրոկոֆեւի «Սիմֆոնիա» բալետային ներկայացումները:

Ֆրունզե Ելանյանը պարարվեստի ամբիոնի անվանի պրոֆեսոր էր, հանրաճանաչ պարարույց-մանկավարժ, տաղանդավոր դերասան, ազնվագույն մարդ եւ քաղաքացի: Նրա հիշատակը որպես ազգային պարարվեստի մեծ նվիրյալի եւ մարդու, մշտապես վառ կմնա բոլորիս սրտերում:

Ֆրունզե Ելանյանի հոգեհանգիստը տեղի կունենա նրա տանը, Մաշտոցի 4, բնակարան 30 հասցեում, ժամը 18-ին:

ԱԿՑԻԱ՝ «ԱՌԱՆՑ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ»

«Հայոռազազարդ» ՓԲԸ ստեղծման տասնամյակի կապակցությամբ ընկերությունը հայտարարում է ակցիա, որի շրջանակներում **փետրվարի 1-ից մինչեւ մայիսի 1-ն** ընկած ժամանակահատվածում բնակիչ-բաժանորդների բնակարաններում կամ առանձնատներում գազի սպառման առեւտրային հաշվառքի սարքի (գազահաշվիչ) տեղադրումը կիրականացվի առանց գազամատակարարման համար վճարվող 40 հազար դրամ կանխավճարի գանձման:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ դատական դեպարտամենտը (այսուհետ՝ Դեպարտամենտ)
հայտարարում է կրկնակի մրցույթ դատական ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ հաղորդակցության գործով վերաքննիչ դատարանի աշխատակազմի հանձնարարական մասնագիտության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ ենթախումբ) (կոդ՝ ԴԴ-2.2-166)

ՀՀ հաղորդակցության գործով վերաքննիչ դատարանի աշխատակազմի հանձնարարական մասնագիտ իրականացնում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության, տեղեկատվական միջոցային հանձնարարի, հասանելիության միջոցների նախագծումը, դրանց շահագործումը, իրականացնում է Դեպարտամենտի ցանցի ծրագրային անվտանգությունը. կազմակերպում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը, արխիվացնում եւ պահպանում է էլեկտրոնային գործավարության եւ նրա գործունեության ընթացքում առաջացած էլեկտրոնային փաստաթղթերը, իրականացնում է օրենքներով եւ կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

" բարձրագույն կրթություն.

"դատական (թեմական) ծառայության պաշտոններում երկու տարվա սպած կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային սպած, կամ վերջին երեք տարվա ընթացքում հաղորդակցության կամ հայեցողական, կամ հաղորդակցության պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային սպած.

"Իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն.

" հանձնարարությամբ եւ ժամանակավոր այլ տեղեկատվական միջոցներով աշխատելու ունակություն.

" գրական հայերենի պատշաճ իմացություն:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթին կարող են դիմել միայն ՀՀ հաղորդակցները:

Նշված թափուր պաշտոններն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթին դիմողները Դեպարտամենտի կենտրոնական մասնաճյուղերի կադրերի բաժին (ք. Երեւան, Վազգեն Սարգսյան 5) պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝

" գրավոր դիմում՝ մրցույթին հանձնաժողովի անունով՝ նշելով այն պաշտոնը, որին հավակնում է.

" այլ պաշտոն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթի՝ դիպլոմ(ների), վկայական(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղական հանրապետական մամուլից) պատճենները բնօրինակների հետ միասին.

" առկան սեռի անձերի՝ նաեւ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին.

" տեղեկանք դատական ծառայության պաշտոնում նշանակվելու դեպքում ծառայողական պարտականությունների կատարմանը եւ լիազորությունների իրականացմանը խոչընդոտող հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդություններով չտառապելու մասին (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1535-Ն որոշում).

" երկու լուսանկար՝ 3X4 սմ չափի.

" անձնագրի պատճենը:

Դիմողը մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ:

Դիմողը մրցույթին ներկայանում է անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:30-ից մինչեւ 17:30-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 28.02.2007 թ.:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաեւ պաշտոնի անձնագրին ծանոթանալու համար կարող են դիմել Դեպարտամենտի կադրերի բաժին (ք. Երեւան, Վազգեն Սարգսյան 5, հեռ. 56-79-53):

Նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարված մրցույթները կկայանան 06.03.2007թ.՝ ժամը 11:00-ին, Դեպարտամենտի տեղում (ք. Երեւան, Վազգեն Սարգսյան 5, հեռ. 56-79-53):

ՀՀ Փոնդային բորսայում իրականացված գործարքների մասին

Փետրվարի 1-ին ՀՀ Ֆոնդային բորսայում իրականացվել է 150,000 ԱՄՆ դոլարի առք եւ վաճառք 358,75 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց միջին կշռված փոխարժեքով: Փակման գինը կազմել է 359,00 դրամ:

ԿԲ մամուլի ծառայություն

ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 01.02.2007 թ.

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Միջին փոխարժեք
USD	1	ԱՄՆ դոլար	358.80
EUR	1	ԵՎՐՈ	464.79
RUR	1	Ռուս. ռուբլի	13.51
GEL	1	Վրաց. լարի	208.62

ՕՐՎԱԿԱՆ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 1.02.2007, գինը՝ 100 դրամ, տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2: